առասպելական (դիցաբանական, միթոսական) պատմությունն է, որ կազմում է ամեն ազգի գրական պատմության նախադուռը: Նրա ստեղծագործության մեջ գործ չունեն քնահաճույքն ու ֆանտազիան: Առասպելը անխուսափելի, տեսողական երևույթ է, բացատրելի պերսպեկտիվայի օրենքներով, որին ենթարկվում է տարածության նման և՛ ժամանակը»:

Ցավոք, մեր այս երկու մեծերի մոտեցումներն ու զգուշացումները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Մեզ՝ հանրությանը 69 պատումներից մերկայացված «Սասնա Շռերի» տարբերակը՝ իբրև միջնադարյան

ժողովրդական բանահյուսության նմուշ, խեղաթյուրված է ծնդաբանությամբ և զրկված է իր հիմնական բնույթից, որովհետև դուրս են դրված հնագույն հավատալից հատուկ տիեզերական, խորհրդաբանական մոտիվները: «Սասնա Շռեր» էպոսը մեր գեներալական հավատալից է եղել հնագույն ժամանակներից և շարունակելու է մնալ՝ վերականգնված ձևով: Հայ ժողովուրդը եթե այսօր երեք ամենամեծ հարստություններն ունի, դրանցից մեկը «Սասնա Շռեր» էպոսն է: «Սասնա Շռեր» էպոսը հայ ժողովրդի ծննդյան վկայականն է:

**Զրույցը՝ Սելանյա ԲԱՊԱԼՅԱՆԻ**

## ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ. «ՈՏՆԱՀԱՐՎԱԾ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ»

Մեզ առանձնահատուկ է արյան կանչը: Մեր երկրան մեջ է այն, ու բավական է հայրենիքի հետ կապված փոքր-ինչ արտակարգ իրավիճակ՝ կինչի արյան կանչը, ու կելեննք մեր թշնամյաց դեմ:

Մարդկային ապրումների այդպիսի իրավիճակների դրսևորումներ ունեն Վարդգես Սուրենյանցի պատմական թեմաներով ստեղծագործությունները՝ «Հռիփսիմեի վանքը Էջմիածնի մոտ», «Կանանց ելքը Անիի եկեղեցուց», «Կաթողիկոս Խրիմյան Հայրիկ», «Լքյալը»...

Արյան կանչը նաև վերահաս ողբերգության կանխագագողություն ունի, ինչ-



Հայ նկարիչ Վարդգես ՍՈՒՐԵՆՅԱՆՑ • 1860 – 1921

տուկ վարպետությամբ Սուրենյանցը այս ստեղծագործության համար էլ կոմպոզիցիոն այնպիսի կառուցվածք է ընտրել, որում հիմնական ասելիքը կենտրոնական տեղ է գրավում՝ իր վրա բեռեցնելով ուշադրությունը: Կառուցվածքի առումով նկարչի այս գործն էլ պարզ է, բայց արտահայտիչ ու բազմանշանակ:

Սուրենյանցի արվեստի արժեքը ոչ միայն թեմատիկայի յուրօրինակության, այլև մեկնաբանման ինքնատիպության մեջ է: Եկեղեցու գունաթափ ու մաշված սալահատակով տարածականության մեջ ընդգծված են մազադաթ ոսկեգոծ կազմերով մատյանները, պարզորոշ են ձեռագրերի մանրանկարները: Արվեստագետը միտումնավոր չի ներկայացրել եկեղեցին որպես կոնկրետ ճարտարապետական կառույց, սակայն դիմացի պատը զարդարող խաչքարով, կիսաշրջանաձև կամարներով ու դրանք պահող այուներով, հրաշքով անծեռնմիջելի մնացած սրբապատկերով այն բնորոշ է դարձրել մեր բոլոր եկեղեցիների համար. ահա բովանդակության իմաստավորությունը համընդհանուր դարձնելու սուրենյանցական արվեստի արժանիքներից մեկը:

Գնահատելով եկեղեցու լուսավորչական ու համախմբող դերը ազգի լինելիության ճակատագրում՝ հայրենասեր նկարիչը մի խորհուրդ էլ ունի. հուսալքության չեն տանում նրա ստեղծագործությունները, այլ ավելի հաստատուն ու վճռական են դարձնում հանդուրդը, որ կապրի ու կմնա այն ժողովուրդը, որը չարիք չի գործում, և խավարը չէ նրա պաշտամունքը, այլ ճշմարիտ է իր գործերով ու գնում է դեպի Լույսը:

**Ռ. ՍԱՆՈՒԿՅԱՆ**



պես Վարդգես Սուրենյանցի մոտ: Մեծ եղեռնից դեռ մեկ տասնամյակ առաջ սուլթանական Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված բազմաթիվ ան-

մարդկային բռնություններից, զանգվածային ջարդերից ու ավերումներից արվեստագետը կանխագագել է վերահաս մեծ աղետը՝ ստեղծելով իր «Ուտահարված սրբություն» նկարը:

Եղեռնագործությունը կատարվել է Վանի շրջակա գյուղերում ու Վարագավանքում: Թուրքական հրոսակախմբերը նախ հրի ու սրի են մատնել բնակավայրերը, ապա մտել եկեղեցի՝ այն կողոպտելու: Խառնամբուխը, չբավարարվելով պատմական արժեքների հափշտակումով, պատառոտել ու դեսուդեն է նետել մազադաթյա ձեռագրերը: Մուտքի մոտ սպանված է վանահայրը, ով, հավանաբար, փորձել է փրկել ձեռագրերը... Կոնկրետ իրադարձության պատկերումով նկարիչը մեծ ընդհանրացման է հասել՝ մեկ անգամ ևս հավաստելով հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների ոչնչացման հետևողական քաղաքականությունը: Իրեն հա-

### ՀԵՏԱՊՆԳԵԼ ՀԱՅԵՐԻՆ

1980 թ. զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենի առաջնորդությամբ Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ժամանակաշրջանի պաշարողական արտակարգ դրության ղեկավարությունը 1982 թ. սեպտեմբերի 8-ին անվտանգության կազմակերպությանը հրամայել է Թուրքիայի ամբողջ տարածքով մեկ «հայտնաբերել, հաշվառել և հետապնդել արմատներով հայ քաղաքացիներին»:

Թուրքական «Ուղիկալը» գրել է, որ իրամանր բոլոր նահանգապետերի կողմից անվերապահորեն և պատրաստական կատարվել է: «Մեր կողմից ձեռք բերված այդ փաստաթղթում «հայ» արտահայտությունը «հրեա» արտահայտությամբ փոխելու դեպքում, այն չի տարբերվում միտլերյան Գերմանիայում Հոլոքոստից առաջ տեղի ունեցած հետախուզական աշխատանքներից, ընդ որում, դա արվել է ոչ թե հիտլերյան Գերմանիայում, այլ


25 տարի առաջ Թուրքիայում, այն էլ հարկեր վճարող և բանակում ծառայող թուրքական քաղաքացիություն ունեցող հայերի նկատմամբ», - գրել է թերթը:

### ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՒՄԷ 200 ՀԱՁԱՐ ՀԱՅ

Ըստ պաշտոնական տվյալների, Մոսկվայում գրանցված է երկու հարյուր հազար հայ: 2002-ին այդ թիվը կազմում էր մոտ հարյուր յոթանասուն հազար: Արդեթեացիների թիվը Մոսկվայում կազմում է մոտ 145 հազար մարդ: Սակայն մասնագետները պնդում են, որ օտարերկրացիների թիվը իրականում շատ ավելին է: Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայության ղեկավարը շեշտել է, որ ամեն տարի Ռուսաստան է ժամանում 20 միլիոն մերգաղթող, որոնցից 10 միլիոնը՝ անօրինական:



# ՏԻԳՐԱՆ ՄԵԾ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐ



Հայոց թագավորներից ամենահզորի՝ Տիգրան Մեծի անձը զբաղեցնում է քաղաքական գործիչների ու արվեստագետների՝ պոետների, նկարիչների, երաժիշտների արդեն քանի-քանի սերնդի միտքը: Կարկառուն այս բարեփոխիչն ու պետական գործիչը վարձական պատմագիրների «մշակած» հայոց առաջնորդի ստեղծտիպիկն ոչ մի կերպ չի համապատասխանում: Նրա գործունեությունը «պատմությունն ու գիտությունը խմբագրողների»՝ «թույլատրելիության շրջանակներից» դուրս է և, ըստ էության, հակադրվում է հենց հայերի համար «թխմիած» ազգային հերոսի բնույթին: Տիգրան Մեծի հանդեպ այս մոտեցումը երկուհազարամյա ավանդույթ ունի, և, թերևս, դրանով է պայմանավորված, որ հայոց արքայից արքայի կերպարը մինչ օրս գործնականում ուսումնասիրված չէ: Այնինչ ակնհայտ է, որ ընդհանուր մի շարք հատկանիշներով մեր Տիգրանը ապշեցուցիչ նմանություններ ունի ռուսների Իվան Ահեղի ու Պետրոս Առաջինի հետ: Պատմական երևելի ուրիշ կերպարներ էլ կան, որոնք շատ ու շատ բնութագրերով հիշեցնում են հայոց արքային:

Հարկ է նշել, որ հայոց պաշտոնական պատմագրությունը, որ, անշուշտ, Տիգրան Մեծի կայսրության շրջանում եղել է հունարենով և, մասամբ, ասորերենով, հռոմեացիների կողմից ամբողջովին ոչնչացվել է: Հավանաբար, շատ լուրջ հիմքեր պիտի լինեին դրա համար: Պլուտարքոսը, Ստրաբոնը և Հին աշխարհի այլ պատմագիրներ հիշատակում են Մետրոդորոս Սկեփասացու՝ հատուկ Տիգրան Մեծին նվիրված աշխատությունը: Հայաստանը Հռոմի հպատակը դառնալուց հետո ոչնչացվեցին նաև Հերակլիդեսի, Ապոլլոնիդեսի, Դիոֆանտոսի և հին այլ հեղինակների երկերը, ովքեր «անզուգույնն էին ունեցել» իրենց ստեղծագործություններում հայոց արքային պատկերել ճշմարտագիրներն: «Հայ Տիգրանին» նվիրված բազմաթիվ տրակտատների ծրագրված ոչնչացումը թելադրված էր Հռոմի քարոզչական քաղա-

քականությամբ, ինչի մասին շատ դիպուկ ասել է Կիկերոնը. «Թույլ տվեք ինձ, Կվիրիտներ, աստ հետևել մեր տարեգիր պոետների օրինակին և լռել մեր պարտությունների մասին»: Ընդ որում, ինքը՝ Կիկերոնը ևս, պաշտոնական քաղաքականությանը տուրք տալով, իրեն չի զրկել այդ հաճույքից՝ Տիգրան Մեծի հզորությունը պայմանավորելով ոչ թե վերջինիս անձնական արժանիքներով, այլ ներկայացնելով դա որպես «ասիացվոց» վերջիններիս համար ատելի Հռոմի դեմ ընդհանուր պայքարի տեսակետից: Մեջբերենք կարճ մի հատված Կիկերոնի ճառից. «Երբ Լուկուլլոսը իր զորքով մտավ նրա (Տիգրանի) թագավորությունը, շատ ցեղեր արդեն զորավոր էին մեր զորապետի դեմ: Մի կողմից ահով էին լցվել այն ցեղերը, որոնց երբեք հռոմեական ժողովուրդը մտադիր չէր եղել անհանգստացնել կամ պատերազմի միջոցով նվաճել: Իսկ մյուս կողմից՝ բարբարոս ցեղերի մեջ մի դաժան ու զրգռիչ կարծիք էր ստեղծվել և տարածվել, որ իբր թե մեր զորքը այդ երկրներն էր մտել, որպեսզի կողոպտի ամենահարուստ ու ամենանվիրական սրբատեղիին: Այսպիսով բազմաթիվ և մեծ ցեղեր զրգռվել էին և դարձյալ մատնվել ահ ու սարսափի»:

Հռոմեական աղբյուրների կամֆակալությունը մեր թվարկության առաջին դարի անցքերի վերաբերյալ իրավացիորեն նկատելի է նշել և Հովսեփ Փլավիոսը: Իր «Հրեական պատերազմի մասին» գրքում նա մատնանշում է, որ նույնիսկ իրադարձություններին ակնատես հռոմեացի գրողների մոտ չափազանց խեղաթյուրված են պատմական ստույգ փաստերը և ի հաճույս հռոմեացվոց զովվորական աշառու: Նկարագրություններ են տրված: Իսկ Տիգրանի մասին նա խոսում է իբրև շատ ուժեղ միապետի: «Այդ ժամանակ լուր ստացվեց, - գրում է Հովսեփ Փլավիոսը, - որ Հայոց Տիգրան թագավորը 300 հազար զորքով մտել է Ասորիք և գալու է նաև Հրեաստան: Տեղեկանալով այս մասին՝ թագուհին և ժողովուրդը, բնականաբար, սարսափափար եղան: Նրանք ուղարկեցին Տիգրանի մոտ, որը պաշարել էր Պտղոմայիդը, դեսպաններ բազմաքանակ ու արժանավայել ընծաներով:

Իսկ Սելենե թագուհին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում, զորոն էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին: Դեսպանները եկան նրա մոտ և աղաչեցին, որ բարի ու ողորմած լինի դեպի իրենց թագուհին և ժողովուրդը: Եվ այդ ժամանակվանից Տիգրանը հոգատար վերաբերմունք ունեցավ նրանց նկատմամբ և քաջալերեց նրանց ու հուսադրեց: Երբ Տիգրանն արդեն վերցրել էր Պտղոմայիդը, նրան հայտնեցին, որ Լուկուլլոսը պաշարել է և ավերում է Հայաստանը: Երբ Տիգրանն այդ իմացավ, վերադարձավ իր բուն երկիրը»: Այդ նույն ժամանակ նա օգնության ձեռք մեկնեց Պոնոսի թագավոր Միհրդատին, որը փախել էր Լուկուլլոսի հետապնդումից Իբերիա, հրավիրեց իր մոտ և իրաժարվեց նրան հանձնել Հռոմին: Տիգրան Մեծի անձնական քաջության և հանուն պետության փրկության ինքնազոհաբերվելու պատրաստակամության մասին վկայվում է Կասսիոս Դիորի երկուն: Տիգրան Մեծն արդեն 75 տարեկան է, նրա

հզորության գագաթնակետն արդեն հետևում է, նրա դեմ է դուրս եկել հայոց ընդդիմությունը սեփական որդու զխավորությամբ, որը համաձայնության էր եկել Գնեսու Պոմպեոսի հետ: Սեպարատ հաշտության համաձայն, Տիգրանը պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից, այն է՝ Ասորիքից, արևելյան Կիլիկիայից, Փյունիկիեից, Կասպադովկիայից, Կորդուիքից ու Տուրքից և մնալու էր միմիայն իր հայրենի երկիր՝ Մեծ Հայաստանի թագավոր: Իսկ նրա որդին՝ Կրտսեր Տիգրանը, ստանալու էր Տուրքը և հոր մահից հետո ժառանգելու էր նրա գահը: Հայոց ծերունի թագավորը պետական խորագետ այրի պահվածք է դրսևորում: Երբ Պոմպեոսի զորաբանակը մոտեցել էր Արտաշատին, Տիգրանը, տեսնելով, որ դիմադրությունն աննպատակ է ու անօգուտ, վճռեց ինչ գնով էլ լինի համաձայնության գալ Պոմպեոսի հետ և գնաց ինքն անձամբ նրա մոտ ու կամավոր անձնատուր եղավ հռոմեացիներին: Ստնելով Պոմպեոսի մոտ, ինչպես վկայում է Կասսիոս Դիորը, «նա դեմ գցեց իր խույրն ու ուզեց խոնարհվել ու նրան ողջունել, սակայն Պոմպեոսը իսկույն տեղից վեր կացավ, նրան բարձրացրեց և նստեցրեց իր կողքին: Այնուհետև մխիթարեց և հայտնեց, որ նա ոչ միայն կմնա Հայաստանի թագավոր, այլև կհամարվի հռոմեացիների բարեկամ ու դաշնակից»: Սրա շնորհիվ Տիգրանը պահպանեց հայկական անկախ պետականությունը, Հռոմի հետ ռազմաստրատեգիական միության դաշինք կնքեց և շարունակեց խաղաղ ու անխռով թագավորել մինչև իր մահը՝ 85 տարեկանը:

Պատմահայրը՝ Մովսես Խորենացին, հայոց թագավորներից ամենաբարձրն է գնահատել Տիգրան Մեծին. «Բայց անցուք այսուհետև որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նման է գործք: Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոմեհագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ»: Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ռ.Գրուսսեն նույնպես շատ բարձր գնահատական է տվել Տիգրան Մեծի գործին պատմական կտրվածքով. «Տիգրանը՝ այս մեծագույն, անզնահատելի տիրակալը, անկասկած, առավել արժանի է պատմության հիացմունքին, քան նրա ժամանակակից Միհրդատ Եվպատորը, ով փայլուն կերպով «իր կայսրությունը ինքնասպանության հասցրեց», մինչդեռ Տիգրանը ապահովեց իր ժողովրդի հավերժական գոյությունը»: Գրուսսեն կարևորել է նաև Տիգրանակերտ քաղաքի՝ Մերձավոր Արևելքում հելլենիզմի խոշորագույն կենտրոնի հիմնադրումը:

Ֆիլատելիայում Տիգրան Մեծին նվիրված նամականիշ թողարկվեց 1988-ին (երկրաշարժից տուժածներին նվիրված 4 նամականիշերի շարքում). նամականիշի վրա պատկերված է մ.թ.ա. 1-ին դարում հատված նրա կիսադեմով դրամը: Այս տարի Հայփոստը Տիգրան Մեծի դիմանկարով 4-նամականիշանոց շարք թողարկեց: Թողարկվել են նաև ծրարներ, փոստային բացիկներ մեդալի դրոշմանկարով և հորեյանական ոսկեդրամով:

Վարուժան ԱՆՏՈՆՅԱՆ

# ՀՐԱԶՅԱՆ ՍԱՐՈՒԽԱՆ-60

## Տիրատուր ներքնատեսություն


Բնականության, բնականոնության, բանականության ու ոգեկանության քաղցի և անբան խոսքի մեր ժամանակներում գրական մեր գանգվածն ապաժամանակյա հայեցակերպի թմբիրի մեջ է, և քանի որ դա իրոք թմբիր է, ապաժամանակյան նշանակում է ոչ թե բոլոր ժամանակներին պատկանող, այլ պարզապես ոչ մի ժամանակի չպատկանող, նույնիսկ սեփականին, որովհետև այդ գանգվածի՝ անօրինակ ապագա կերտելու բարձրաքիթ հավակնոտությունը հիմնված է մի կողմից՝ ոչ թե անցյալի, այլ անցյալի եղած-չեղածը ծաղր ու բամբասանքով լցնելու ամբարտավանության վրա, մյուս կողմից՝ հազնեղիք-թափեղիքի ու սիրագուրկ սեռատենչության փալաս-փուլուսից կարկատած դրոշով մեջլիս մտնելու արքրականության երերուն թառի վրա: Եվ կարող ես շնչահեղձ լինել աղտեղ միջավայրի պարտադրած այս հոգեթափությունից, եթե շուրջդ չլինեն նաև գրչի մոգիչ խենթեր՝ գրի ուժին հավատացող ու հավատացնող և այդ ուժով անկյալին բարձրացնել ջանացող, գետնամածությունից վերնամերձության մղող իրենց ինքնագոհ նվիրունով:

Ահա բանաստեղծի տողասանդուղքով վեր էլնելու հավատավոր հույսը, նրա՝ «քո ցողի համար, անձրևի ու ծյան և քո աշխարհիկ անխռովության, հար հրահրվող հոգու եղեճնում» քեզ համար խռով մեռնելու պատրաստականությունն է, որ ազգ ու երկրիդ կեռված մեջքն այնուամենայնիվ շտկված տեսնելու վստահությունն է ներշնչում:

Ախր, ո՞նց ասեն հազարամյակների մեր սիրո ու հայրենյաց ազնիվ սարսուռները ոտնակոխ տալով 21-րդ հազարամյակ ոտք կոխած մեր ուշացած մոդեռնիստներին, որ տղամարդու կամ կնոջ մարմնի եղած-չեղածն աննպատակ ի ցույց դնելու ամենից հարմար տեղը գրականությունը չէ, որ մերկությունը գեղեցիկ է ոչ իր ցուփոթյամբ, այլ արվեստավոր գեղեցկությամբ ու հրաշալույս ճերմակությամբ, որից ոչ միայն կուրանում ես, այլև կուրությունը ես իբրև զգեստ առաջարկում մերկացյալին: Ավելին, թանձրացյալ այրականությունն այդ (ոչ միայն արտաքին) գեղեցկության համար արցունքները չթաքցնելու խիզախությունն է.

*Միակ բանը,  
Որ կարող եմ քեզ տալ,  
Քո բաժնի վերջին արցունքներս են.  
Վերցրու...*

Մեր 60-ամյա հոբելյարի՝ Զրաչյա Սարուխանի արցունքները, սակայն, միայն սիրո համար չեն, այլ «ամեն տառի, ամեն բառի, ամեն տողի, տաղի համար»: Վայ թե միակ բանը, որի համար արցունք չի թափել, տասնամյա հապաղումն է եղել իր առաջին գրքի տպագրության: Զգիտեմ՝ ինչքան է վշտացրել դա երբեմնի պատանի հոգուն, բայց մի անօրինակ վրեժ է լուծել նա գրա-



կանությունից ու ապագա գրական աշխարհից, գալիք գրահավաքների բանը բուրդ է, քանի որ Սարուխանից առանձին ընտրանի կազմելու հնարավորություն չպիտի ունենան. սա՛ է նրա վրեժը՝ թույլ բանաստեղծություն չունենալը...

Չանգվածային լրատվամիջոցը՝ իր գանգվածային բնույթով, հնարավորություն չի կարող տալ գրական երկի լիարժեք քննության: Սակայն ընթերցողի ուշադրությունն ուզում են հրավիրել, հեղինակի բնորոշմամբ, մի երկփեղկ գործի վրա, որն իր փեղկված խտությամբ բանաստեղծ հոգու խորաչափության ազդարարն է: Բանաստեղծությունը, պայմանավորված իր կառուցվածքի արտասովորությամբ, ունի տողատակի հեղինակային հղում. «Գրեթե չկետադրված երկփեղկ այս գործը կարողալ նաև որպես մի ամբողջական քառատող»\*: Ահա՛ բանաստեղծությունն այդ, որ ըստ էության համանիշ բանաստեղծափունջ է.

*Ի՞նչ բանածն բարդեն  
Ի՞նչ ավելորդ խնդիր  
Յոր առջև է արդեն  
Նա խայթերով խրթին:  
Կարծրակառույց ու կուռ  
Ի՞նչ ավերակ հարցեր  
Նա աչքալույծ ու լուռ  
Տուն է վերադարձել...*

Թեման աստվածաշնչյան է կամ համաշխարհային, բովանդակությունն էլ՝ հանրահայտ: Այս առումով կարծես ասելիք չկա: Արտաքուստ՝ կառուցվածքային առումով էլ ասելու բան չկա, քանի որ հեղինակն ինքն է բացում «խաղաբարերը»: Սակայն լեզվաբանիս աչքից չվրիպեց մի բան՝ բանաստեղծական այս հորինվածքի հարացուցաշարակարգային խաչաձևումը, որից սերունդ-բացվում է երրորդ փեղկը: Վերստին անդրադառնա՞նք հեղինակի

հղումին. «... Այս գործը կարողալ նաև որպես մի ամբողջական քառատող»: Գեղինակային «նաև»-ը նշանակում է երկրորդ արտահայտություն, ասել է՝ քառատողի հարաբերությամբ առաջին արտահայտությունը՝ ութնյակը, բովանդակությունն է. ութնյակը՝ իր ուղղաձգությամբ, նշանի նշանակյալն է, քառատողը՝ իր հարթաձգությամբ, նշանի նշանակիչը. ութնյակով կերպավորված լեզվական բովանդակությունն իրացված է նաև որպես քառեկակերպ խոսքային արտահայտություն: Սակայն քանի որ թե՛ ութնյակը, թե՛ քառատողն արդեն տրված են խոսքում որպես արտահայտություն, ապա «լեզվական բովանդակություն» բնորոշումն ութնյակի համար պայմանական (նշան) է: Այն բովանդակությունն է քառատողի նկատմամբ իր առաջնային արտահայտվածությամբ և, որպես այդպիսին, երկրորդական բովանդակություն է լեզվական վերնուղղուի բուն (առաջնային) բովանդակության հարաբերությամբ. սա էլ նշանակում է, որ քառատողն արտահայտության արտահայտություն է կամ նշանակչի նշանակիչ:

Ժամանակակից լեզվաբանությունը, ի պատիվ հայ լեզվափիլիսոփայական ու լեզվանշանագիտական մտքի, լեզվական հորինվածքի նկատմամբ ունեցած բազմաչափ վերաբերմունքով թևակոխել է իր պատմության չորրորդ փուլը, որի կազմավորման առանցքում է դուրսարդ Աթայանի անունն է: Ըստ աթայանական ուսմունքի՝ լեզուն տրամաբանական, հոգեբանական և նյութական (հնչյունային) շերտերի ներհյուս բաղկացություն է, որոնցից առաջին շերտը լեզվական համակարգն է, վերջինը՝ խոսքային զծակարգը, երկրորդը՝ առաջինը երրորդին շաղկապող լեզվախոսքային շարակարգը: Բնավ պարտադիր չէ, որ տեսական այս իրականություններին իրազեկ լինի բանաստեղծը: Կարևոր է ժամանակի ընդհանրական մտածողության բեկումը՝ ըստ արվեստի ու գիտության ոլորտների: Բացառված չէ, որ այս ընդհանրականությունն իր դրսևորումներն ունենա նաև արվեստի ու գիտության ուրիշ ճյուղերում:

Արդ, հարկ է պարզել Սարուխան բանաստեղծի տվածի՝ այս ամենի հետ ունեցած խորքային կապը: Ինչ վերաբերում է ութնյակ/քառատողի իրական լեզվական համակարգին, որը վերն անվանեցի նաև լեզվական հորինվածքի վերնուղղու, բացահայտելի կամ նույնիսկ բացահայտ է միայն իր հեղինակի համար, որովհետև բանակերտման գաղտնիքի հրաշքն արվեստագետի սեփականությունն է, և ընթերցողը կռահումներին մակարդակից այն կողմ չի անցնի, ինչքան էլ մասնագետ լինի նա: Վերջինիս գնահատականները լեզվի խոսքամերձ ներքնուղղուին միայն կարող են վերաբերել: Ահա ինքս էլ, փորձելով մերժեմալ այդ ոլորտին, ընթերցողիս իրավունքով, հեղինակի՝ մակերևույթին թողած համակարգային ութնյակին ու զծակարգային քառատողին ի տրիտուր բացել են ուզում երրորդ փեղկը. դրանից արտածում են այդ երկուսին ներանցված հոգեբանական գոյամակարդակը՝ շարակարգա-

յին հյուսվածքը՝ լեզվաբանի կետադրությամբ:

*Ի՞նչ բանաձև բարդեն,  
Ի՞նչ ավելորդ խնդիր  
Կարծրակառույց ու կուռ  
Ի՞նչ ավերակ հարցեր  
Չոր առջև է արդեն  
Նա խայթերով խրթին,  
Նա աչքալույծ ու լուռ  
Տուն է վերադարձել...*

Կարծում եմ, Սարուխանի աշխարհին մոտենալիս շահեկան կլինի օգտագործել այս բանալին, որով կարելի է բացել նրա ներք-

նատես հոգու դուռը, որովհետև բանաստեղծական նորարարությունը միայն չափուձևի նորությամբ, ոչ էլ բառաստեղծման առատությամբ է որոշելի, որով լեզուն է նաև մեր բանաստեղծի ստեղծագործությունը, չկա՝ նորարարություն առանց խորքային գյուտի: Իսկ այդ գյուտը թերըմբռնելի կլինի, եթե չասենք, որ նրա «Անառակ որդու» չարչրկված թեման էլ զուտ ձևակազմական նպատակների չի ծառայում. սա ինքնաճանաչ ու ինքնաճանաչման մղող մշտանորոգ ինքնակեղեքում է, որ ինքնահաշտության հանգրվանին կարող է հանգել միայն զուլալությամբ, որն արդեն ափսոս է քրքրելը, ուստի խոսքիս ավարտը թող ազդարարեն բա-

նաստեղծի՝ իր իսկ արտահայտությամբ՝ «անլռելի լուռություն» հուշող կախման կետերը.

*Տեղավորվեմ մտքիս մեջ՝  
Տեղնուտեղը մանկանամ.  
Չորն ու մորս շնչին մերժ՝  
Շնչակույրլ թանկանամ,  
Ու՛ անանուն անտարիք,  
Փառավորվե՛մ ինձնով մեկ,  
Ու տեղ չանեն մտքիս մեջ,  
Ու էլ բան չցանկանամ...*

**Դավիթ ԳՅՈՒԼՁԱԴՅԱՆ**

\*Չրայայ Սարուխան, «Ի տրիտուր», Երևան, 2005, էջ 49:

**ՀԱՅՈՒՀԻՆ, ՈՎ ԳՐԱՎԵԼ Է ՄԱԿԵԴՈՆԱՅԻՆԵՐԻ ՄՐՏԵՐԸ**

# Արմինե Փիլոյանի՝ Մինեի մասին

«Չայ մշակույթի դեսպանը Մակեդոնիայում»․ այսպես են մակեդոնացիները բնորոշում մեր հայրենակցուհի Արմինե Փիլոյանին Մինեին, ում խեցեգործական աշխատանքների յուրաքանչյուր ցուցադրություն տեղացիների համար դառնում է մշակութային իրադարձություն: Նրա մասին բազմիցս հրապարակումներ են եղել մակեդոնական մամուլում, տեսանյութեր են ներկայացվել տեղի հեռուստատեսությամբ, անդրադարձել է նաև մեր մամուլը: Այդուհանդերձ, ավելորդ չհամարեցինք մեկ անգամ ևս անդրադառնալ երիտասարդ հայուհու գործունեությանը՝ օգտվելով նրա՝ հայրենիքում գտնվելու հանգամանքից: Զրույցի սկզբում հետաքրքրվեցինք, թե ե՞րբ ենք Մինեի աշխատանքների ցուցադրությունը տեսնելու Չրայաստանում: Մինեն պատասխանեց, որ ինքն էլ անհամբերությամբ է սպասում այդ միջոցառմանը, պարզապես կազմակերպական ինչ-ինչ խնդիրներ պիտի լուծվեն, իսկ ցուցադրելու բան չատ կա՝ նոր հավաքածու, իրագործված նոր մտահղացումներ: Առայժմ զբաղված է մակեդոնական մի քանի քաղաքներից ստացված հրավերներին նախապատրաստվելով, և ո՛չ միայն... Մինեն ակտիվ դերակատարում ունի նաև տեղի հայության համախմբման գործում:



րաստել ո՛չ միայն կավից, այլև՝ արծաթից: Խեցեգործական աշխատանքների հետ միասին նա միշտ ներկայացնում է նաև իր բիժուտերիական աշխատանքները, որոնք Մակեդոնիայում մեծ հաջողություն են վայելում և արագ վաճառվում:

Ամուսնու և երկու դուստրերի հետ մշտական բնակություն հաստատելով Մակեդոնիայում Արմինեն սկսեց ուսումնասիրել այդ երկրի մշակույթը: Խեցեգործությունը, նրա խոսքերով, այդ երկրում չափազանց հարգի է, սակայն կավն օգտագործում են միայն կենցաղային իրեր, ամանեղեն պատրաստելու նպատակով: Մինչդեռ մենք հայերս, կավին ավանդաբար ավելի գեղարվեստորեն ենք վերաբերվում: Արմինեի խեցեգործական աշխատանքներն առաջին իսկ ցուցահանդեսում այլոց աշխատանքներից առանձնացան իրենց ինքնատիպությամբ, ուրույն ճաշակով ու ոճով. նա անմիջապես ուշադրություն գրավեց տարբեր երկրներից ժամանած մյուս 65 արվեստագետների շարքում և արժանացավ մրցանակի: Խեցեգործությունը, նրա խոսքերով, Մակեդոնիայի մշակույթի նախարարության մշտական ուշադրության առարկան է. Բիտոլյա քաղաքում, օրինակ, նախարարը խեցեգործներին նվիրել է մի մեծ շենք, որտեղ նրանք ստեղծագործում են, ցուցադրում իրենց աշխատանքները և վաճառում:

Մինչ կյանքում իր կոչումը գտնելը՝ խեցեգործությանը նվիրվելը Արմինեն զբաղվում էր լեզվաբանությամբ: ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի անգլերենի բաժինն ավարտելուց հետո սկսել է դասավանդել «Չրայայ Աճառյան» համալսարանում, այնուհետև հայրենի Արմավիրում աշխատել է ջրամատակարարման նորաստեղծ մի ընկերությունում՝ որպես գլխավոր տնօրենի ասիստենտ: Այս աշխատանքը շրջադարձային դեր ունեցավ աղջկա կյանքում. գլխավոր տնօրենը՝ ազգությամբ մակեդոնացի Յանե Վրտեսկին, դարձավ նրա ամուսինը: Սակայն Արմինեն այն աղջիկներից չէր, ովքեր, ունենալով բարեկեցիկ կյանք, ապրում են սոսկ առօրյա հոգսերով: Անընդհատ ձգտումը՝ նորը սովորելու, կատարելագործվելու, ինքնարտահայտվելու և տարբեր ասպարեզներում ինքնադրսևորվելու, նրան հանգիստ չէր տալիս: Նա սկսեց համագործակցել ամերիկահայ բանաստեղծուհի Դայանա Տեր-Չովիանցիայանի հետ՝ թարգմանելով և հրատարակության պատրաստելով հայ կին գրողների ստեղծագործությունների անթոլոգիան, այնուհետև սկսեց հաճախել Չ. Իգիթյանի գեղագիտական դաստիարակության կենտրոն խեցեգործության դասեր առնելու Նունե Բաղայանի մոտ: 4-ամսյա ամենօրյա դասընթացները տվեցին իրենց արդյունքը. ստեղծագործելու անհագ ցանկությամբ վարակված Արմինեն արագ յուրացրեց խեցեգործական արվեստը և սկսեց պատրաստել իր առաջին հավաքածուն: «Խեցեգործության հիմքում երեք կարևորագույն տարրերի՝ հողի, ջրի, կրակի հետ աշխատանքն է. ջուրը հառնվում է հողին և կրակով թրծվում: Երեքն էլ ամբողջությամբ զգալու համար աշխատում էի և այսօր էլ աշխատում եմ միայն մատներով՝ առանց կաղապարների, առանց գործիքների: Անբայատրելի մի հաճույք է կավի ջերմությունը զգալը», պատմում է Արմինեն: Չետո նա սովորեց նաև մոմի մոդելավորում, սկսեց զարդեր պատ-

խեցեգործությունից բացի՝ բազմաշնորհ Մինեն, ինչպես նրան բնորոշում են տեղացիները, անդամակցում է նաև Սկոպյեի Կանանց ինտերնացիոնալ կազմակերպությանը, որն ունի 110 անդամ աշխարհի գրեթե բոլոր երկրներից: Կազմակերպությունում ընդգրկված կանայք անցկացնում են բարեգործական մշակութային միջոցառումներ՝ իրենք իսկ հանդես գալով արվեստի այս կամ այն ձևում, միջոցառումներից ստացված հասույթն էլ փոխանցելով կարիքավոր մանուկներին: Արմինեն այդ միջոցառումներում և՛ երգում է, և՛ նվագում՝ դաշնամուր, քանոն:

Մակեդոնիայում հայերը մեծ թիվ չեն կազմում. թեպետ գիտեն իրենց՝ հայ լինելը, բայց հայերեն խոսել չեն կարողանում: Ուշագրավ է, սակայն, այն փաստը, որ, ինչպես Արմինեն է պատմում, այնտեղ «պատահական» հայ ընտանիքներ չկան. բոլորը մտավորականներ են և մակեդոնացիների մեծ հարգանքն են վայելում: «Ապրիլի 24-ին հայերս մշտապես հավաքվում ենք, հարգանքի տուրք մատուցում եղեռնի զոհերի հիշատակին», պատմում է Արմինեն: Նա, սերտ կապեր ունենալով տեղի հայության հետ և իմանալով վերջիններիս՝ մայրենի լեզուն սովորելու մեծ ցանկության մասին, հանձն է առել նաև այդ առաքելությունը. այժմ դասընթացների ծրագիրն է մշակում ու գրքեր ձեռք բերում, որպեսզի, վերադառնալով, սկսի պարապմունքները:

Առաջիկա դեկտեմբերին նա ունենալու է մի քանի ցուցահանդես մակեդոնական քաղաքներում: Եվ արդեն իսկ ունի բազմաթիվ նոր ծրագրեր, որոնք, վստահ ենք, անպայման իրագործելու է իրեն բնորոշ լավատեսությամբ, նվիրվածությամբ, ժպիտով...

# ԼՈՒՄՆԻ ՀԱԿԱՌԱՎԿ ԵՐԵՍԸ ԿԱՄ ՓԱՆՉՈՒՆԻՆԵՐԻ ՊՍԱԿԱԶԵՐԾՈՒՄԸ ԴԱՌՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԶԱՎԵՇՏՈՎ

Ազնիվ ընթերցողը պետք է միշտ պարտապանի զգացում ունենա տաղանդավոր գրողի հանդեպ: Առավել ևս պրոֆեսիոնալ ընթերցողը, գրականության գիտակը, գրականագետը: Ես, որ թեպետ երկու, թե երեք անգամ գրավոր խոսել եմ իր գրականության մասին, ուրախ եմ, որ այսօր պատեհ առիթը ունեմ ընթերցողի իմ պարտքը հատուցելու և իմ հիացմունքն ու սքանչացումը արտահայտելու Վահագն Գրիգորյանի հիրավի տաղանդավոր, խորապես արդիական, մտածողությամբ և արվեստով ժամանակակից, թարմ և ուժեղ գրականության հանդեպ:

Վահագն Գրիգորյանի «Առաջնորդի կյանքն ու մահը» վեպը (Երևան, 2006, «Նաիրի» հրատարակչություն) տաղանդավոր գրողի հերթական տաղանդավոր գործն է: Գիրքը գրվել է 2001 թվականին: Ինչի՞ մասին է այս երգիծական վեպը: Գրողը պատմում է հայ քաղաքական կյանքի, քաղաքական մի կուսակցության գործունեության, այդ կուսակցության առաջնորդի վերջին մեկ-երկու տարվա կյանքի մասին: Ըստ երևույթին, դատելով ըստ մեր ժողովրդի քաղաքական կյանքի պատմության, ըստ մեր ներկա քաղաքական կյանքի, ըստ մեր ժողովրդի այսօրվա վիճակի ու ըստ մեր իրականության, հայ քաղաքական կուսակցություններին ու նրանց առաջնորդներին վիճակված է ի վերջո իրենց անփառունակ կյանքի և ծախսվել, ինքնամպատակ «գործունեության» վախճանը գտնել հայ երգիծական լավագույն գրականության էջերում, իբրև պարոնյանական դառն ծիծաղի և օտյանական սպանիչ ծաղրի առարկա:

1988-ից ի վեր մեր երկիրն ու ժողովուրդը մեծ փորձությունների ենթարկվեցին և դրանց հետևանքով հայտնվեցին ճակատագրական մեծ շրջադարձի առջև: Պատմությունը մեզ երկրորդ անգամ մեծ հնարավորություն տվեց ազգային անկախ, ինքնուրույն պետություն կառուցելու, ինչը տասնյակ սերունդներ են երազել դարերով: Բայց այն, ինչ տեղի ունեցավ և ինչը այսօր գոյություն ունի Հայաստանում, դժվար է սերունդների երազանք կամ այդ երազանքի իրագործում համարել: Դժբախտությունն այն է, որ պատմական այդ մեծ խնդիրը, այսպես թե այնպես, պետք է իրագործեր խորհրդային իրականության մեջ ապրած հանրությունն ու մարդկային զանգվածը: Մինչդեռ խորհրդային հանրությունը իր մեծագույն մասով արատավոր հանրություն էր, քաղաքացիական հստակ ու առողջ մարդկային նկարագիր ձևավորելու առումով բացարձակապես մերժելի ու անկատար: Տասնամյակներ շարունակ խորհրդային մարդը սարել է պետական ու հասարակական կեղծիքի մեջ, երկատված պետականորեն կեղծվող իրականության և իր ապրած իրական կյանքի միջև: Այդ արատավոր հանրությունն էլ ձևավորել է խորհրդային մարդու հոգեբանությունն ու հեղիեղուկ, ընչաքաղց, պիղծ ու անբարոյ նկարագիրը: Ի վերջո, խորհրդային մարդը յոթանասուն տարի սարել է առանց հավատի ու առանց Աստծու գաղափարի, այսինքն՝ առանց բարոյականության և առանց խղճմանքի, առանց կարեկցանքի և գթասրտության: Այնպես որ, մեր նոր երկիրն ու մեր նոր իրականությունը պետք է ձևավորեր-ստեղծեր-կառուցեր խորհրդային ռեժիմի ու խորհրդային կյանքի հոգեբանություն ունեցող, խորհրդային կոմունիստական կուսակցության երեկվա հավատավոր անդամ ու եռանդուն գործիչ Հոմո Սովետիկուսը: Անշուշտ, խորհրդային իրականության մեջ կար մարդկանց մի շերտ, ընդհանուրի մեջ գրեթե չերևացող մի հատված, որ ազգային բարձր գիտակցություն, ազգային ու մարդկային բարձր իդեալներ, բարոյական մաքրություն և քաղաքացիական նկարագիր ուներ: Ցավալի իրողությունն այն է, որ երբ օրը հասավ, մեր հանրության այդ շերտն ու այդ հատվածը անմիջապես մեկուսացվեց կասկածելի ճանապարհներով նոր իրականության մեջ իշխանության հասած Հոմո Սովետիկուսի ձեռքով և հետո պարզապես մի կողմ նետվեց:

Եվ ի՞նչ հաջորդեց դրան, ի՞նչ տեղի ունեցավ: Խորհրդային երկիրը փլվել էր, հազարավոր գործարաններ, հաստատություններ, հիմնարկ-ձեռնարկություններ, ինստիտուտներ էին փակվել և հարյուր հազարավոր մարդիկ զրկվել էին աշխատանքից, դարձել էին գործազուրկ: Ազգային շարժման վիթխարի տարերքը իր մեջ ներառել էր ամեն տեսակ մարդկանց: Հետո դրանց

մի մասը հասավ իշխանության, դարձավ ղեկավար ու պաշտոնյա: Մեծ մասը, բնականաբար, չհասավ որևէ դիրքի և իշխանության: Ահա հենց այդ ժամանակ էլ ասպարեզ եկան կուսակցությունները: Ազդեցության ոլորտներից, դիրքից, իշխանությունից հեռու մնացածները, - իսկ սրանց մեջ կային ամեն կարգի մարդիկ՝ դատարկապորտներ, բախտախնդիրներ, զանազան ճարակորդներ, կասկածելի անցյալ ու վարք ունեցող անձնավորություններ, - սկսեցին կուսակցություններ կազմել: Մարդիկ լավ էին հասկացել նոր իրականության թելադրանքը՝ իշխանության, այսինքն՝ բարեկեցիկ և ապահով, հարուստ կյանքի հասնելու միակ ուղին կուսակցություն կազմելն է և կուսակցության մեջ լինելը: Այսպես էր, որ Հայաստանում կուսակցությունների թիվը շատ շուտով անցավ մի քանի տասնյակի սահմանը և աճում էր սպառնալի արագությամբ: Իհարկե, ազգային հանրահանուր նպատակները, ազատության հրապարակում արտասանված ոգեշունչ ճառերը միասնական ուժերով նոր ու ազնիվ երկիր կառուցելու մասին, ազգային բարձր գաղափարների ու իդեալների արծարծումները, որ երկիր ու ժողովուրդ էին պեկոծում, վաղուց մոռացվել են... Դրանց մասին ի՞նչ խոսեն, իրենք էլ են ամաչում, որ խոսեն... Եվ ինչպե՞ս կխոսեն, իրենց կյանքով, վարքով ու վարքագծով, ունեցվածքով, հարստությամբ և այսպես սաստ «տնտեսական գործունեությամբ» շա՞տ են տարբերվում, շա՞տ հեռու են իշխանավորներից և օլիգարխներից... Այսպես, մեր իրականության մեջ հայտնվեցին նոր մարդիկ, նոր կերպարներ... հենց սրանք էլ ներկայացնում են այսօրվա կուսակցությունները:

Եվ ահա, Վահագն Գրիգորյանի վեպը պատկերում է մեր կյանքի այս ընթացքը, որ ծնունդ է տվել, ի թիվս այլ կուսակցությունների, նայել վեպի հերոս «Ընթացք» կուսակցությանը: Վեպի բուն նյութը «Ընթացք» կուսակցության պանծալի առաջնորդ, մեծ ազգասեր և հայրենասեր Վասակ Չոփուրյանի հերոսական կյանքն է ու մահը: Ընթերցողը զուր կփնտրի իրական դեմքեր ու նախակերպարներ «Ընթացք» կուսակցությունը Վահագն Գրիգորյանի երևակայության արդյունքն է, իր հորինած, բայց այնքան բնորոշ ու հավաստի, այնքան որոշակի ու տիպական, որ նրա գեղարվեստական պատկերի մեջ ընդհանրանում-ճանաչելի են դառնում սնկի պես աճած բոլոր մանր ու մեծ կուսակցությունները:

Վեպը, իհարկե, երգիծական-սատիրական վեպ է: Այլ կերպ, հավանաբար հնարավոր էլ չէ պատկերել այդ երևույթը, որովհետև այն, ինչի մասին խոսում է գրողը, այն նյութն ու թեմաները, որ արծարծում է նա, մեզ համար այսօրվա դառն իրողություն են:

Վիպասանը եթե կյանք և իրականություն է ներկայացնում, եթե որոշակի իրականություն նկատի ունի, եթե իր գրածը վերացական-պայմանական իրականությունն է, ապա պետք է պատմություն պատմի - դիպաշար ներկայացնի՝ դեպքերի և իրադարձությունների ընթացք, և պետք է կերպար (կերպարներ) ստեղծի: Դրանք միշտ կան կյանքում, իրականության մեջ, մեր շուրջը, բայց պարզ դիտողի համար այդ կերպարները կարծեք հստակ ուրվագծված չեն: Այն բանից հետո, երբ գրողը տեսնում է նրանց, հայտնաբերում է նրանց, ընդգծում է նրանց գոյությունը, նրանք այլևս վավերական գոյությունից վերածվում են գրական իրողության: Վահագն Գրիգորյանը իրաշալի կերպարներ է ստեղծել, կենդանի, իրական, արտահայտիչ, հավաստի ու գեղարվեստական ընդհանրության մեջ ճանաչելի գրական հերոսների մի շարք է անցնում ընթերցողի աչքերի առջև: Հիմնական հերոսները, հիմնական տիպարները և հիմնական գործող անձինք երկուսն են՝ կուսակցության բոցաշունչ առաջնորդ Վասակ Չոփուրյանը և իր, նախ՝ վարորդ, ապա օգնական ու նաև գաղափարական մարտիկ ու հոգեկից ընկեր Պետրոս Ապրեսյանը, միմյանց լրացնող, միմյանց թարգմանող, միմյանց ամբողջացնող հոյակապ մի երկյակ: Մնացյալները մեղ շրջապատն են ու կուսակցական և հանրային միջավայրը: Կուսակցությունը ունի իր քաղաքական խորհուրդը, մեր հայկական «Սրի և խփի միությունը»՝ նշանավոր ու փառապանծ գործիչներով, որոնցից յուրաքանչյուրը գրոտեսկային կերպար է, իրաշալիորեն երգիծված, և մարմնավորում է մեր ներկա իրականության հանրային կյանքի ներքին

ենթաշերտերից մեկնումները:

Խորհրդային երկրի ժողովուրդը խորհրդային ռեժիմն ու խորհրդային հասարակարգը նախապես խորտակել, կործանել էր իր խոսքով ու կամքով իր բանականության մեջ՝ սպանիչ անեկզոտների և զանազան զվարճալի հորինվածքների մեջ նսեմացնելով և դատապարհելով նրանց: Որքան ռեժիմը վերանմաշվել էր ճանաչելով, շքանշաններով ու պարգևատրումներով, կոչումներով, տիտղոսներով ու փառաբանություններով իր պաշտոնյաներին, ռեժիմի ընտրյալ մարդկանց բարձրացնում, երկինք էր հանում, ժողովուրդն այնքան ավելի ռաբլեական ծաղրով նրանց վար էր բերում, նետում էր իր կյանքի առօրեականության մեջ, իջեցնում-դարձնում էր գետնին հավասար, ավելին ժողովրդական սպանիչ խոսք ու գրույցի մեջ դարձնում իր խամաճիկն ու խեղկատակը: Այս ամենը մեծ մասամբ դրսևորվում էր այլաբանորեն, փոխաբերական արտահայտություն էր ստանում: Առասպելը իջեցվում էր կենցաղային, շուկայի հրապարակի խեղկատակության աստիճանի, հերոսը պակասեցնվում էր և վերածվում խեղկատակի... Խորհրդային իրականության առասպելներից մեկն էլ գորավար Վասիլի Իվանովիչ Չապան էր, հրամանատար Չապանը, որ համարվում էր հերոսության ու անձնագիտության բացառիկ օրինակ, ինչպես որ նրան ներկայացնում են Դմիտրի Ֆուրմանովի հայտնի վեպն ու խորհրդային հայտնի կինոնկարներից մեկը՝ Վասիլի եղբայրների «Չապան»-ը: Եվ ահա խորհրդային ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ Չապանի և իր թիկնապահ թե համարյա Պետյայի մասին պատմվող պատմություններում Չապանը միշտ ներկայանում է իբրև ժողովրդական սպանիչ ծաղրի և ուրախ հումորի առարկա, իբրև վայրենի բարքի, կասկածելի հերոսականության, տգետ ու բռի վարքի տրո անկիրք մարդ: Եվ անշուշտ, Չապանը խորհրդային բանահյուսության մեջ շատ խորհրդանշական, իմաստավոր և ընդհանրական կերպար է:

Վահագն Գրիգորյանը սրամիտ հնարք է բանեցրել խորհրդային առասպելական հերոսին պակասեցնող անեկզոտային հարաբերությունը փոխադրելով հայկական հողի վրա: Ուստիստ քաղերմու համար Վասան որդի Յովհաննեսին իհարկե Վասիլի Իվանովիչ է, մանավանդ եթե նա դիրք ունի կամ պաշտոնյա է, և Պետրոսն էլ՝ Պետյա:

Այսպես սկիզբ է առնում «Ընթացք» կուսակցության ղեկավար Վասիլի Իվանովիչի - Վասիլի Իվանիչի և նրա վարորդ, օգնական, քարտուղար, խորհրդատու, սան, ապա կուսակցության ուղեղ և նվիրական գործի շարունակող Պետյայի համատեղ գործունեության պատմությունը: Իրականում Պետյան դառնում է Վասիլի Իվանիչի հերոսական, անձնուրաց և փառահեղ կյանքի անմիջական մասնակիցը, վկան ու ազնիվ կենսագիրը: Ռոբերտ Փենն Ուորենի «Թագավորական ողջ շքախումբը» վեպի հայկական հեռավոր արձագանքը վերածվում է փայլուն գրոտեսկի:

Իսկական վիպասանը պետք է կարողանա վիպել, կյանք-իրականություն-պատմություն պատմել: Վահագն Գրիգորյանը հրաշալի տիրապետում է պատմելու գրողական արվեստին: Եվ իր պատմության հետ աստիճանաբար, հիմնական գործող անձանց կերպարների հետ զուգահեռ, բացվում են մյուս կերպարները:

Գրողը հրաշալի է պատկերել Վասիլի Իվանիչին: Սա նոր երևույթ է հայկական կյանքում, հայ իրականության մեջ: Այս հերոսը մեր նոր ժամանակների «հեղափոխության մակաբույծներ»-ից մեկն է, անշուշտ, ավելի նրբացված, ավելի վարպետ, ավելի խարդախ ու ստոր: Օտյանի Փանջունին, մարմնավորելով շատերին, այնուամենայնիվ անհատ էր: Սրանք Վասիլի Իվանիչներն ու Պետյանները, բազմաթիվ են, բազմաբանակ ու բազմություն, որոնք տասնյակ կուսակցություններ են:

առավելությամբ» (էջ 26-27):

Սպանիչ սարկազմով դառը ճշմարտություն է ասում գրողը «Ընթացք» կուսակցության կառուցվածքի ու կազմի, նրա աշխատանքային «խոհանոց»-ի, գործուն ու եռանդուն անդամների մասին Քաղկուն, Գիտնական, հմբագիր և այլն: Նախկին ռեժիմի անգործ մնացած զաղափարական ու մտավոր գործիչները տեղավորվում են զանազան կուսակցություններում, որոնց ներկայացուցչական նպատակներով այսպես կոչված մտավորականներ են պետք. «Յետներս նաև մեկ-երկու դերասան, բանաստեղծ ու նման բաներ էինք տանում, որոնք էլ իրենց ձևով էին Վասիլի Իվանիչի, ինչպես ասում են, փառքը երգում» (էջ 26): Այդ «նման բաներ»-ից մեկը հմբագիրն է, մյուսը՝ Գիտնականը: հմբագիրը առհասարակ ոչինչ մեկն է, Գիտնականը՝ անսկզբունք ու աննկարագիր, սոված ու անապահով մտավորականության պնակալեզ տեսակը. «Գիտնականի ելույթը, պետք է ասեն, զարմանալիորեն ընդունելություն գտավ: Նրա յուրաքանչյուր երկրորդ բառը որևէ սննդամթերքի անուն էր՝ հաց, պանիր, երշիկ, կարագ, ձու, կաթ...» (էջ 206): Գիտնականի ճառը ընդունելություն է գտնում, որովհետև սոված է ոչ միայն ճառ ասողը, այլև լսողը:

Վասիլի Իվանիչի կերպարը, ինչպես ասում են, բացվում-զարգանում է «Ընթացք» կուսակցության բուռն գործունեության իր մեկը մյուսից անհեթեթ ծրագրերի, դրանց իրագործման ձևերի, միջոցների և ուղիների, ճոռն ու վերամբարձ ճառերի մեջ: Աստիճանաբար բացվում է նաև կուսակցական կյանքի ներքին խոհանոցը՝ ինչպե՞ս են փող հայթհայթում իրենց գործունեության համար, ի՞նչ են մտածում, ի՞նչ են անում...

Եվ այս ընթացքում գրողը պատկերում է մարդկանց, որոնք միայն մեկ անգամ են հայտնվում վեպի էջերում, բայց գեղարվեստական պատկերման հավաստիության և ճշմարտացիության շնորհիվ մնում են ընթերցողի հիշողության մեջ: Ահա, օրինակ, վեպի առաջին էջերում հայտնվող Կոլոտը, նոր իրականության այսպես կոչված «լավ տղաներ»-ից մեկը (կյանքում էլ սրանք ածական անուններով են ապրում), երիտասարդ մարդ, որ շատ փող ունի և «չըրջալու» և ուզում է կուսակցության ցանկերում լավ տեղ ունենալ: Պետյան «հարթում է» այս հողի վրա Կոլոտի և Վասիլի Իվանիչի միջև ծագած անհարթությունը: Այդ հաշտեցումից հետո Վասիլի Իվանիչն ու Պետյան, այսինքն՝ կուսակցությունը, ստանում են 10000 դոլար կանխիկ փող՝ Կոլոտի «օգնությունը» կուսակցությանը, իսկ Կոլոտի անունը կուսակցության ցանկում մի երեսուն անունից առաջ է ընկնում:

Այս «լավ տղան» իրոք ուր տեսալ է: Սրանք նոր երևույթ են հայկական իրականության մեջ և բավական տարածված երևույթ՝ զգալի թիվ են կազմում: Մեծ մասամբ զուրկ կամ շատ հեռու գրագիտությունից ու զարգացումից (բայց դիպլոմներ ունեն, քանի հատ որ ուզեցան), նրանք փող և հարստություն դիզելու գործում անմրցելի են, օրինակակցները են արդիական կողոպուտի իրենց միջոցներն ու եղանակները, ամրագրել են դրանք օրինական փաստաթղթերով և իրավական դաշտով, միշտ շրջում են տասնյակ սափրագլուխ թիկնապահներով և մեկը մեկից շքեղ մեքենաներով և կոչվում են գործարարներ: Իրենց տնտեսական «գործունեությունը» ամեն կողմից ապահովելու համար նրանք անպայման կապվում են նաև որևէ կուսակցության հետ (ըստ օրվա թելադրանքի և պահանջի) և աջակցում են այդ կուսակցությանը՝ փող են տալիս, զանազան օգնություն և այլն:

Մի այլ տիպ է ներկայացնում «հյուսիսային լայնածավալ երկրից եկած ազնիվ գործարարը»: Այս մարդը ծագումով հայ է, և սա էլ իր խաղն է խաղում՝ մարդը երկրի գործող նախագահի անունն անգամ չգիտի, բայց այս կուսակցությանը փող է տալիս և իր պայմաններն է թելադրում: Սա էլ հեռուն գնացող իր նպատակներն ունի: Ընդամենը մի երկու էջում երևացող այս կերպարը նույնպես հրաշալի է գծված: Առհասարակ Վահագն Գրիգորյանը գրողական մանրամասնի վարպետ է: Իբրև թե հայ այս Սլավոմիր Սաֆարովը երևանի օդանավակայանում հեռախոսով խոսում է Ռուսաստանում գտնվող իր սիրուհու հետ և խոսքի մեջ դառնում է իրեն ճանապարհող Վասիլի Իվանիչին և Պետյային «Տղաներ, - արդեն մեզ է դիմում, - ես որ քաղաքից եմ թռչում...» (էջ 49):

Ինքը՝ Վասիլի Իվանիչը, նորոքյա կուսակցականի և կուսակցականության տիպար օրինակ է՝ իր նկարագրով, իր հոգեբանությամբ, իր գործելակերպով: Բնական է, երգիծական ստեղծագործության մեջ շատ բան հեղինակը հասցնում է ծայրահեղության, գրոտեսկի, բայց խորքում միշտ մնում է իրատեսական ու



օրինավոր ու պարկեշտ մարդկանց, որբերին օգնելու պատրվակով կորզելով նրանց՝ ամբողջ կյանքում ազնիվ աշխատանքով հավաքած փողը, որ նրանք տալիս են սիրով և հոժարությամբ: Այսպես է կուսակցությունը «աշխատուն» սփյուռքահայության հետ:

Եվ վերջապես հասնում է օրը, երբ Վասիլի Իվանիչը պետք է մեկնի Զյուսիսային դաշնության մայրաքաղաք: Պաշտոնապես Վասիլի Իվանիչը Մոսկվա է մեկնում բուժվելու, բժշկական քննության ենթարկվելու նպատակով, բայց իրականում մեկնում է «պղտոր ջրերում ձուկ որսալու»: Փայլուն են Մոսկվայից Զայաստան, կուսակցության լրագրին Պետայի ուղարկած տեղեկատվությունները: Դրանք իրենց ձևի ու ոճի մեջ այնքան կատարյալ են, որ թվում է, թե պարզապես արտագրված են օրվա թերթերի էջերից: Բայց, ավա՜ղ, Զյուսիսային դաշնության մայրաքաղաքում կուսակցության առաջնորդի արևը թեքվում է դեպի մայրամուտ: Զյուսիսային մայրաքաղաքում Վասիլի Իվանիչը, Պետայի խոսքով ասած, ասես Կեսարը լինի՝ անզուգական, շքեղ, ծայրահեղ հայրենասեր, քաղաքական իմաստուն գործիչ և այլն: Նա ինքը իրեն գրեթե ֆրանսիական արքա է զգում՝ «Կուսակցությունը, Պետայ, - ասում է, - են են» (էջ 401): Սակայն այս Փանջունի կեսարն ու միջատային Լյուդովիկոս 14-րդը անկարող մարդու իր անփառունակ կյանքը ավարտում է անսպասելիորեն և նսեմացնող մահով: Բայց նա մեռնում է, որպեսզի հառնի մի նոր կուսակցություն մի նոր առաջնորդով: Վասիլի Իվանիչը նոր կերպարով շարունակվելու է տպարանի երեկվա բանվոր՝ հետո գործազուրկ, քաղ՝ Վասիլի Իվանիչի վարորդ, իսկ հետո, արդեն Վասիլի Իվանիչի մահից հետո, մի նոր կուսակցության առաջնորդ Պետրոս Ապրեսյանի մեջ: Նոր կուսակցության առաջնորդը տարբեր կլինի Վասիլի Իվանիչից, իր կյանքով ու գործունեությամբ նա կարբագրի և կխմբագրի Վասիլի Իվանիչի սխալներն ու վրիպումները և իր գործունեության մեջ, այսինքն՝ հանրային իրականության խաբեությունների ու խարդավանքների մեջ շատ ավելի վարպետ կլինի: Պատահական չէ, որ նրա անունը Պետրոս է (գրական նուրբ արձագանք հայ գրականության սքանչելի կերպարներից մեկին՝ քավոր Պետրոսին) և ազգանունն էլ՝ դեռ Ապրեսյան. նա երկար է ապրելու:

«Ընթացք» կուսակցությունը Վասիլի Իվանիչի մահից հետո իհարկե պարտություն է կրում նախագահական ընտրություններում: «Ինչպես սպասվում էր, քվեաթերթիկները կեղծելով, ոստիկանության ու զորքի ակտիվ միջամտությամբ վերընտրվեց նախկին նախագահը» (էջ 147): Վասիլի Իվանիչին փոխարինած պարոն Քաղկոնը չի անցնում նույնիսկ մեկ տոկոսի սահմանագիծը: Այնպես որ շատ շուտով «Ընթացք» կուսակցությունը, միաբջիջ ինֆուզորիայի պես բաժանվում է երկու մասի. մի նոր կուսակցություն է առաջանում «Ընթացք-2» անվանումով: Ամենակարճ ժամանակի մեջ մեր ժողովրդի աչքերի առջև քանի՜ կուսակցություն այսպես կիսվեց ու պառակտվեց:

Վահագն Գրիգորյանը այնքան ճշմարտացի ու հավաստի, մանրամասնորեն ու հանգամանալից է ներկայացրել քաղաքական մի կուսակցության կյանքը, մարդկանց, նրանց առօրյան ու գործունեությունը, թեկուզ երգիծանքի հայելու մեջ, և երգիծելով մատնացույց է արել այնպիսի մանրամասներ և իրակություններ, որ կարող է թվալ, թե գրողն ինքը նման առնվազն մի երկու կու-

սակցության հայտնի գործիչ կամ առաջնորդ է եղել: Զասկանալի է, որ այս պարագային վեպը գրողի տաղանդի և ուժի, թափանցող հայացքի և կարողության արդյունք է:

Կուստան Զարյանի հայտնի վեպի հերոսներից մեկը մի առիթով ասում է, որ մեր մեծագույն չարիքը մեր կուսակցություններն են: Վահագն Գրիգորյանի վեպը հավաստում է, որ այսօր «Ընթացք» կուսակցության նման տասնյակ կուսակցություններ են հայտնվել մեր ժողովրդի կյանքում և դժբախտաբար անվերադարձ: Եվ մեր ժողովուրդը այդ կուսակցություններից այլևս փրկություն չունի:

Ըստ իս, Վահագն Գրիգորյանի «Առաջնորդի կյանքն ու մահը» վեպը իրոք արժեքավոր ու մնայուն գործ է, գեղարվեստական փայլուն վավերագիր, որովհետև իրականությունը՝ իրականություն, բայց առավել կարևորը գեղարվեստականությունն է, իսկ այս վեպում իշխողը իրոք գեղարվեստականություն է:

Իմ ըմբռնումով վեպ գրող արձակագիրը պետք է հրաշալի լեզու ունենա, գրողական խոսքի վարպետություն, սքանչելի պատմող լինի և վարպետորեն տիրապետի երկխոսության արվեստին: Վահագն Գրիգորյանը ճիշտ այդպիսի արձակագիր է: Նրա գրքերում վիպական պատմության պատումի խոսքային ընթացքի և լեզվի միջև որևէ խզում չկա: Նրա ստեղծագործությունների լեզուն իսկական արձակի լեզու է՝ բնական հոսումով, սահուն, ինքն իրենից աճող և ընդարձակվող: «Առաջնորդի կյանքն ու մահը» վեպը գրական նուրբ, երբեմն հազիվ նշմարելի արձագանքներով ու ծայրահեղությամբ, ծաղրանմանակային հատվածներով, զանազան հասցեատերերի ուղղված գրական սուր երգիծանքով և տեղ-տեղ էլ առօրյա կյանքի ուրախ հումորով լեցուն գիրք է: Այսպես, օրինակ, ահա իր գրական արձագանքը «Արարատյան դաշտի առավուտը» դասական գրականության հայտնի էջին: Վասիլի Իվանովիչը Արմավիրում է, Արարատյան դաշտում: Արարատյան դաշտում ամեն ինչ երևում է, «չէր երևում միայն մարդ» (էջ 191): Իլֆի ու Պետրովի անմահ հերոսի գրական հիշողությունն էլ կա վեպի էջերում՝ «Սառույցը շարժվել է, ընկերներ...» (էջ 207):

Իսկական գրողը չի կարող ապրել իրականությունից մեկուսացած, իրականությունից դուրս: Վերջին մեր երկու տասնամյակը ներկայացնող ու պատկերող գրական փորձեր եղել են անշուշտ: Վավերագրական գրքերի հետ գրվել են նաև արձակ ծավալուն ստեղծագործություններ, բայց ցավոք սրտի դրանք գեղարվեստական լուրջ արժեք չներկայացնող գործեր են: Մի բանաստեղծ էլ մի ծավալուն վեպ գրեց, վեպը թմբկահարությամբ ու աղմուկով ասպարեզ հանելով: Ինձ թվում է, որ նա մտադրված է եղել անհաջող վեպ գրելու, և դա նրան լիովին հաջողվել է:

Մենք մեր առօրյա խոսք ու գրույցի մեջ երբեմն դժգոհում ենք, թե արձակ չունենք, թե լուրջ արձակ չի ստեղծվում: Անշուշտ, ծայրահեղություն է: Երեք տարբեր սերունդների երեք գրողների՝ Կարպիս Սուրենյանի, Վահագն Գրիգորյանի, Լևոն Խեչոյանի և էլի մեկ-երկու գրողի գրականությունը բավական է, որ մենք այսօրվա մեր արձակի մասին խոսենք մեծ հարգանքով:

Վահագն Գրիգորյանի «Առաջնորդի կյանքն ու մահը» վեպը վերը ասվածի լավագույն հաստատումներից մեկն է:

Յուրի ԽԱՉԱՏՐՅԱՆ  
13-15 օգոստոսի 2007, Փարիզ

## Получить гражданство РФ в упрощенном порядке соотечественники из постсоветских государств смогут до 1 января 2009 г.

Возможность получения гражданства РФ в упрощенном порядке для соотечественников из постсоветских государств, которые не успели воспользоваться действующей до 1 января 2008 года льготой, Государственная дума РФ продлевает до 1 января 2009 г. Соответствующие поправки в закон «О гражданстве РФ» депутаты Госдумы одобрили в ходе пленарного заседания 14 ноября в первом, во втором и в третьем чтениях.

Законопроектом продлевается до 1 января 2009 г. упрощенный порядок принятия гражданства заявившим о своем желании его приобрести иностранным гражданам и лицам без гражданства, имевшим гражданство СССР, прибывшим в РФ из государств, входивших в состав СССР, и зарегистрирован-

ным по месту жительства в РФ по состоянию на 1 июля 2002 г., либо получившим разрешение на временное проживание в РФ или вид на жительство.

Отметим, объявленная политика привлечения российских соотечественников, проживающих за рубежом, на постоянное жительство в Россию осуществляется через Государственную программу по оказанию содействия добровольному переселению в Российскую Федерацию соотечественников, проживающих за рубежом.

377 депутатов поддержали законопроект.

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

ՔԱՅԼԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՎ

Գնելը տառապալում էր անքնությունից: Պայքարում էր դրա դեմ ամեն միջոցներով: Ցերեկը չէր ննջում, երեկոյան ուշ էր մտնում անկողին, փորձում էր քնաբերների բոլոր տեսակները. չնայած դժվար էին ձեռք բերվում, բայց Գնելը ճարպկում էր մի կերպ պոկել այստեղից-այնտեղից: Դրանց թվաքանակը ամեն անգամ ավելացնում էր, սակայն մարմինը ընտելացել էր այդ հաբերին և ընդունում էր շաքարի նման:

Մնում էր մի միջոց. քնելուց առաջ մտաբերել անցյալը: Դա էլ մաշվեց, կորավ գալարների խորխորատներում: Վերջին ժամանակները ինքնեկ առաջացավ դրական ազդակների մի վիճակ, որը, կարծես թե, քնաբերի դեր էր կատարում... Դա անսպասելիորեն գործեց... Բանն այն էր, որ Գնելը, որը շատ էր սիրում իր մայրաքաղաքը, պառկելով քնելու, սկսում էր մտովի քայլել Երևանի փողոցներով: Դեռ քայլում էր Յուսիսային պողոտայի նորակառույցների միջով: Երբ վերջանում էր արդեն կառուցապատված մասը, Գնելը քայլում էր շինարարական փոսի վրայի օդով, մինչև դուրս էր գալիս Աբովյանի վերջը, հրապարակի մոտ: Հաճույքը մեծ էր և, կարևորը, անդորրություն էր բերում: Անդորրությունը ծնունդն էր երևանի նոր ու հին փողոցների սիրո: Հանգստանում էր Գնելը...

Դեռ քարձրանում էր Սարշալ Բաղրամյան պողոտայով, Ամերիկյան համալսարանի մոտ թեքվում դեպի աջ, գնում ժամացույցի գործարանի կողքով, ապա դուրս գալիս Վաղարշյան փողոց, քայլում, նորակառույցները ըմբռնելով շարժվում առաջ, հասնում մինչև Դավիթբենի կամուրջը, որի կառուցման հենց առաջին օրվանից նա մասնակցում էր իր ներկայությամբ: Անցնում էր կամուրջը՝ նայելով ձորի երկու պռունկներին, որտեղ խոյացել էին գեղեցիկ տներ: Շեշտակի փոխում էր երթուղին, սկսում էր քայլը թունանյանի փողոցով, թունանյանի թանգարանի առջևից և քայլում, քայլում օպերայի և Յուսիսային պողոտայի արանքով, անցնում էր Տերյանի անկյան հոյակապ կիսակառույցի մոտով, նորեն հրժվում, հասնում մինչև Աբովյանի անկյունը, որտեղ կոնստրուկտիվիզմի ժամանակ կառուցած ֆիզկուլտուրայի տան կողքին նորեն հոգին պարարող բարձրահարկ է արդեն խոյացել... Շուտ, շուտ վերջացրեք այս գեղեցկուհու ձևավորումը... Քիչ է մնացել... Գնելի մարմինը ընդարմանում է... Սակայն նա շարունակում է իր քայլը... Մատենադարանի առջևից սկսում է նոր քայլը. Մաշտոցի պողոտայով իջնում է ցած, դիտում է երկու կողմը՝ ո՞ր շենքն է նոր... Շարունակում է դեգերումը, մոտենում է Կենտրոնական շքեղագարդ շուկային, որը դեռ սովետների ժամանակ Գնելի ազգային հպարտությունն էր: Իսկ ստորգետնյա անցումը կառուցվեց նորեն իր ներկայությամբ, երբ նա հետևում էր յուրաքանչյուր քարի դրամը:

Հաճախ իր կողքին էր հայտնվում Դեմիրճյանը, և նրանց հայացքները միևնույն ուղղությամբ էին սևեռվում: Հաղթանակի կամուրջ հասնելը խնդիր չէր. մի բան որ քայլումը մտքի մեջ էր... Կամուրջի սկզբում «Սետրոպոլ» հյուրանոցն է, որը Գնելի համար անսպասելի կառուցվեց, քանի որ Գնելը հոժար էր նույնիսկ այնտեղ կառուցված փոքրիկ տնակին: Գնելի հավակնությունը մեծ չէր, նա համաձայն էր ամեն տեսակի նորակառույցի, միայն թե երևանը դուրս գա իր գավառային վիճակից: Ո՞ր մնաց ցեխի մեջ պագած պարսկական չախանան, որտեղ Գնելը թեյ էր խմում միայն Երևանում գոյություն ունեցող ստեպլիցի շենքով, որ կոչվում էր «Գյազարի մուրաբա»: Փափազյան փողոցում մեքենայի միջոց հայանցիկ նկատել էր մի նոր եվրոպական շենք: Գնալ էր պետք և նրա մոտ, վայելել շենքը, շոյել հայացքով, սիրել նրա լինելությունը... Եվ անդորրը թաքուն մտցնում էր դեռ նիրհի, ապա և քնի մեջ: Այդպես քնում էր Գնելը:

Մյուս անգամ, մտնելով անկողին, մտովի ճամփու սկիզբն էր ընտրում Փափազյան փողոցը, որը տանում էր դեպի նախկին երկաթգիծը, ուր այժմ պողոտա պիտի բացեն նրա տեղում: Ուղեձողերը արդեն հանել են, և դա առաջին ուրախությունն էր: Գնելը քայլեց դեռևս անմշակ ճամփով... Նրա աջ եզրին շենքեր էին բարձրացել, աչք էին շոյում Երևանը վերածելով պատկառելի

մեզապոլիսի: Թերևս այդ պատկառանքը երկար ժամանակ մրցունակ քաղաքի բացակայությունից էր Գնելի համար: «Աղքատի հաց» մտածում էր Գնելը: Նա հասավ Կասկադի գլխավերևը: Հարթակից բացվում է այլևս ժպտաշուրթ, խայտակն Երևանի համայնապատկերը, իսկ աջ կողմում, ներքևում Վերածնունդի գործերի հանգույն տպավորություն են թողնում նորակառույց շենքերը Գնելի վրա: Իջնում է աստիճաններով և մինչ թամանյան փողոցը, թերևս ծաղկագարդ պուրակը, և Մորփեսոսը քնքշորեն, առանց զգուշացնելու վերցնում է իր գիրկը:

Այդպես Գնելը սկսեց քուն մտնել՝ նախօրոք գիտեմալով, որ մեծ ջանքեր պետք չեն հանգիստ քնի համար, քնաբերների կարիքը չկա այլևս... Բացի այդ, նա երջանկություն էր մտովի ճամփորդությունը Երևանի փողոցներով... Եվ նա արդեն անհամբեր սպասում էր երեկոյին ու կամխազգում այն մեծ կամակությունը, որ սպասում էր իրեն և փափուկ թևերի վրա տանում էր դեպի քուն...

Չարենցի փողոցն ու նրա բոլոր «վտակները», փակուղիները, Չարբախը, որ Գնելի մտքի մեջ կառուցվում էր իր «նախագծով», Սարյանի փողոցն ու նրանից ելնող ու նրանում մտնող նրբափողոցները, Տիգրան Մեծի պողոտան... Կենտրոնական հրապարակից Գնելը մտավ պողոտա... Եվ քայլեց մինչև կայարան, որտեղ անգամ գնալվեց Քոչարի գլուխգործոցով, հետո անցավ բոլոր փողոցները, սակայն որոնք արդեն մշուշապատվում էին, մոտեցնում էին քնի... Վերջապես Գնելը հասավ գերեզմանոց: Անցավ Աղասի Խանջյանի շիրմաքարի մոտով, անցավ Արսեն Տերտրյանի, Դրաշյա Աճառյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Արմեն Ջարյանի, Դրամտ Թամարյանի, Հենրիկ Մալյանի, Ռաֆայել Արամյանի, Արուս Ոսկանյանի, Դրաշյա Քոչարի, Սինաս Ավետիսյանի շիրմաքարերի արանքներով... Մտածեց, որ երևի թե ժամանակին Դեր Լաշեզի մակատեսքն է ստանալու հայկական գերեզմանոցը... Սա էլ է շինություն, սա էլ է Երևանը... Կոպերը փակվում էին, և Գնելը քուն մտնելու երանելի խաղաղավետության մեջ էր... Մտովի քայլը շարունակեց. Գրիգոր Դավանցյան, Արմեն Գուլակյան, Հովհաննես Ադամյան... Մնացած դամբանաքարերը քնի մշուշաքողի մեջ էին երևակվում այլևս... ու քնեց Գնելը...

Ասում են նույնիսկ ամենաերկար երազը մի քանի վայրկյան է տևում, սակայն իր հագեցածությամբ առնվազն մի քանի օրվա նյութ է պարունակում: Այդպիսին էր Գնելի երազը. հավաքվել էին նրա գլխին Արմեն Ջարյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Աղասի Խանջյանը, Դրաշյա Աճառյանը և մոտենում ու մոտենում էին բոլորը, բոլորը... Երբ արթնացավ, դեռ երկար ժամանակ չէր կարողանում սթափվել երազից, հետո ուզում էր մտաբերել՝ միայն ի՞նքն էր պատմում Երևանի մասին, թե՞ նրանք էլ էին հարցնում... Իհարկե հարցնում էին՝ այն էլ ինչպիսի՞ ոգևորությամբ ու կարոտով: Արուս Ոսկանյանը անընդհատ հարցնում էր՝ «Ինչպե՞ս է մեր Մայր թատրոնը», Արմեն Ջարյանը Գլխավոր պողոտայի մասին էր անհանգստանում, «Ո՞նց է կինոն», - հարցնում էր Ավետ Ավետիսյանը... Երևի թե՛ հարցնում էին, որովհետև իր շատախոսությունը համր էր... Սի բան էր անկորուստ մնացել Գնելի ուղեղում, որ նա անընդհատ կրկնում էր. «Դե դուք կգաք, ինքներդ կտեսնեք, ինքներդ կհիանաք»: Եվ պատմում էր, պատմում մանրամասն փողոցների մասին, շենքերի մասին, ամեն քունջուպունձախի մասին...

Երազը այնքան իրական էր, մարմնական, որ արթնացումը մի պահ պատրանք թվաց: Շարունակել էր ուզում խոսել Մինասի հետ. նա սիրում էր Երևանը, հաճախ էին զբոսնում նրանք միասին Երևանի փողոցներով, մտնում շատերի համար անհայտ վայրեր, հնաբույր բակեր... և հարցեր պիտի ունենար: Գնելի ուղեղում քիչ բան էր մնացել: Ընդհանուր խանդավառության և համասփյուռ կարոտի մեջ հետզհետե կորչում էին, մշուշապատվում խոսքերը...

Արև հայտնվեց հորիզոնում... Գնելը գործի էր գնում և ամբողջ ճանապարհին փորձում էր չկորցնել երազի շոշափելիությունը...





270

թե ես դաժան եմ, ու գուցե լավ չէր, որ ես ուրախացել էի, որ մայրիկը դավաճանում էր հորս: Թող այդպես մտածեն: Դրա համար երբեք այդ մասին չեմ խոսում: Ձեզ հետ ուրիշ է: Դուք սիրում էիք նրան: Ու դա ինձ համար հաջողության նման մի բան էր: Որովհետև նա արժանի էր, որ սիրեն իրեն: Դուք սիրել էք նրան, սիրել էք, չէ՞: Ես ձեզ շատ եմ տեսել միասին ու համարյա վատահ եմ դրանում: Իհարկե, բիծային էլ եմ փորձում հասկանալ: Դժվար է, բայց փորձում եմ: Երբեք չեմ կարողացել ատել նրան, հասկանում եմ ինձ: Երևի, որ չնայած, թե ինչ է արել, շարունակում է հայրս մնալ: Երբ մեզ ծեծում էր՝ ինձ ու Միրտային, կամ երբ հարձակվում էր մայրիկի վրա, սարսափի հետ մեկտեղ խղճահարություն էի գգում: Խղճահարություն իր, մայրիկի, Միրտայի և ինձ համար: Հիմա էլ եմ դա գգում, հիմա, երբ նա սպանել է մայրիկին, ու

ով գիտի, թե ինչքան ժամանակ կալանված կլինի: Սկզբից չէր ուզում, որ գնամ, բայց արդեն մոտավորապես մի ամիս է, ինչ գնում եմ Միգելետե՝ նրան տեսնելու, ու համաձայնվում է ընդունել ինձ: Տարօրինակ է նրան բնական տեսնել, ուզում եմ ասել չհարբած: Նայում է ինձ, ու հիմնականում ոչինչ չի ասում: Կարծում եմ, որ երբ դուրս գա, ինձ էլ չի ծեծի: Բացի այդ, ես արդեն մեծ մարդ կլինեմ, երևի ամուսնացած, նույնիսկ երեխաներ կունենամ: Բայց ես իմ երեխաներին չեմ ծեծի, այդպես չե՞ք կարծում: Ու նաև համոզված եմ, որ հայրիկը չէր անի այն, ինչ անում էր, եթե այդքան հարբած չլիներ: Թե՞ Դուք հակառակն եք կարծում: Դուք կարծում եք, որ նա ամեն դեպքում մայրիկին կսպանե՞ր այն երեկո, երբ, ինձ հետևելով ու պատժելով՝ ի վերջո երկուսիդ գտավ: Ինձ այդպես չի թվում: Այ տեսեք, Ձեզ ոչինչ չարեց: Միայն ավելի ուշ, երբ սովորականից ավելի շատ խաղողի օղի խմեց, հարձակվեց մայրիկի

վրա: Ես կարծում եմ, որ այլ հանգամանքներում, նա կհասկանար, որ մայրիկը սիրո, համակրանքի կարիք ուներ իսկ նա, ընդհակառակը, միայն հարվածներ էր տվել: Որովհետև մայրիկը բարի էր: Դուք դա պետք է նույնքան լավ իմանաք, որքան ես: Դրա համար, մի քանի րոպե առաջ, երբ Դուք ինձ մոտեցաք ու հրավիրեցիք բոված հաց ու կապուչինո ուտելու, այստեղ, այս նույն սրճարանում, որտեղ ժամադրվում էիք նրա հետ, ես զգացի, որ պետք է Ձեզ պատմեմ այդ ամենը: Երևի Դուք չգիտեիք, կամ էլ միայն մի մասը գիտեիք, որովհետև մայրիկը չափազանց լուռ էր ու, հատկապես, չէր սիրում իր մասին խոսել: Հիմա համոզված եմ, որ ճիշտ եմ վարվել: Քանի որ Դուք լաց եք լինում, ու, որովհետև մայրիկն արդեն մահացած է, սա նրա համար պարզևի մեծ մի բան է, որովհետև նա երբեք լաց չէր լինում:

թարգ. իսպ.՝ ԱՆԻ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆԻ

# Իրացման գույի

«Անեծքի վրա տուն չեն կառուցի»,-  
 Սիրում էր ասել տատս ողորմած:  
 «Վայիս չեն լինի ուրիշի հացին»,-  
 Միշտ խրատում էր պապս ողորմած:  
 Բայց նոր տերերին դա չեն բացատրել,  
 Ու մեծացել են նրանք աչքածակ,  
 Քաղաքն առել են, դարձել հողատեր  
 Ու իրենք էլ են կարգին զարմացած:  
 Թունդ թիկնապահված ջիփատերերն են  
 Հիմա անդադար վիտում քաղաքում,  
 Հին Երևանը նրանք կերել են,  
 Նրանց քիմքով է քաղաքը քանդվում:  
 Ու «քեշով» թափած փողերով կանաչ  
 Վայ-ճարտարապետ տարբեր գյաղաներ  
 Իրենց գեղջկամիտ «ճաշակով» ճանաչ  
 Գծել են... անեծքի՝ պողոտաներ:  
 Ու Երևանը հասակ է առնում,  
 Բետոն, ապակի, արկղեր էլիտար,  
 Հղփացած փողի քաղաք է դառնում,  
 Դառնում է շքեղ ու դառնում՝ օտար...  
 Քաղաքը սարքած իրացման գույի՝  
 Արցունք ու ցավ են թափել մայթերին,  
 Հիմա նայում են իրճվանքով հորթի  
 Իրենց պատրաստած «կարկանդակներին»:  
 Այդքան անեծքի տակ որ մտել են,  
 Իրենց թվում է, թե Աստված չկա,  
 Թե հաշիվները բոլոր փակել են,  
 Մինչդեռ հատուցման պահը դեռ կգա:  
 Կգա՝ ասթմատիկ հազի նոպայով,  
 Ասֆալտի բույրով, օդով փոշոտված,  
 Մորթված ծառերի վրեժով այրող,  
 Ու քինոտ կընկնենք՝ Աստծուց մոռացված:

02.08.2007թ. Արմեն ՀԱՎՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ



Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2003 թվականից մինչ օրս ՀՀ-ից ստացել է 479 դիմում: Ինչպես երեկ ասաց եվրոպական դատարանում Հայաստանը ներկայացնող դատավոր Ալվինա Գյուլունյանը, եվրոպական դատարանը սեպտեմբերի դրությամբ Հայաստանից ստացել է 32 նոր դիմում, որոնք դեռևս չեն քննվել: Ստացված գործերից 87-ը սպասում է դատավորների կոմիտեի, իսկ 22-ը՝ պալատի քննարկմանը: 42 գործի շուրջ դատարանը Հայաստանի կառավարության հետ հաղորդակցության մեջ է: Առկա է մեկ որոշում՝ գործն ընդունելի համարելու վերաբերյալ:

Ներկայումս եվրոպական դատարանը քննարկում է Ա1+ հեռուստաընկերության, Հյուսիսային պողոտայի և Բուզանդի փողոցի բնակիչների սեփականության հետ կապված տասնյակից ավելի գործեր:

◆ Հոկտեմբերի 26-ին Ազատության հրապարակում հրավիրված հանրահավաքում ելույթ է ունեցել ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, որը հայտարարել է վերստին ՀՀ նախագահ դառնալու իր մտադրության մասին: «Այս պահից ինձ հայտարարում եմ ՀՀ նախագահի թեկնածու», - ասել է Լ. Տեր-Պետրոսյանը: Առաջին նախագահը իր ծավալուն ելույթում քննադատել է իշխանություններին, խոստացել, որ իր իշխանությանն ուղղված մեղադրանքներին կապտապախանի հետագայում:



# «Մաշտոց» հանդեսը 10 տարեկան է

Տասը տարի առաջ թարգմանչանց տոնին լույս տեսավ «Մաշտոց» հանդեսի առաջին համարը:

Այս տարի արդեն ամսագիրը նշում է իր **10-ամյա տարելիցը**, ինչին նվիրված միջոցառումը տեղի ունեցավ Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահում:

Կազմակերպությունն իր գործունեության տասը տարիների ընթացքում կյանքի է կոչել ու իրականացրել բազում կրթամշակութային ու բարեսիրական ազգաշահ ծրագրեր, ինչն էլ հավուր պատշաճի կարևորվել ու արժևորվել է:

Եկեղեցու սրահում ցուցադրված էին հանդեսի ցուցադրություն 10 տարիների ընթացքում հավաքված նկարները:

Տոնակատարության հյուրերը հնարավորություն ունեցան տեսնելու եզակի գործեր Կարինե Գլոյանի, Խաչիկ Ղարաբեկյանի, Գեորգի Թովմասյանի, Կարեն Դավթյանի և այլոց աշխատանքներից:

Գուգարաց թեմի առաջնորդ, տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի անունից օրհնության խոսք ասաց Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ, տեր Վահան քահանա Ազարյանը՝ մասնավորապես նշելով, որ «Մաշտոցը» տասը տարվա պատմություն կերտած հանդես է: Այսօր թարգմանչաց տոնն է, իսկ այս հանդեսը հարիր է այս տոնին:

Արդեն 5-րդ տարին է, որ «Մաշտոց» հանդեսը գտնվում է ՀՀ մշակույթի նախարարության բարձր հովանու ներքո: Կարևորելով հանդեսի անուրանալի դերակատարությունը կրթության ու մշակույթի բնագավառի հիմնահարցեր արծածելու գործում՝ ՀՀ մշակույթի նախարարությունը հատուկ պատվոգիր էր շնորհել ամսագրի խմբագրակազմին:

Աշխատակազմի ղեկավար Վարդան Բարսեղյանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից շնորհավորեց «Մաշտոց» հանդեսի խմբագրակազմին և խմբագիր Գագիկ Աթաբեկյանին՝ մաղթելով նրանց հետագա բուռն և արգասաբեր գործունեություն:

«Մաշտոց» հանդեսի անցած ուղին լուսաբանող խոսքերին հետևեց գնահատանքի շնորհանդեսը: Ամսագրի 10-ամյակի կապակցությամբ խմբագրական խորհրդի 5 անդամների անուրանալի վաստակը գնահատելով՝ նրանց արժանացրել էր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին հուշանվագով:

Հուշանվագի ներկայացվածները Հայի տեսակ են, որոնց առաքելությունը կրթության ու մշակույթի զարգացման սրբազան գործին ծառայելն ու անմնացորդ նվիրումն է: «Մաշտոցը» մեծարեց հերթական արժանիներին, որոնք հանդես են գալիս որպես ազգի և հայրենիքի հարատևության, ազգային արժեքների ներդաշնակ զարգաց-



ման ջատագովներ: Նվիրյալներ, որ թռիչքի մեջ ապրած մարդիկ են, լի՝ հարուստ կյանքով ու կենսագրությամբ:

Հանդեսի խմբագիր Գագիկ Աթաբեկյանը վերոհիշյալ հուշանվագները հանձնեց Գեղագիտության ազգային կենտրոն Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Սուսաննա Մկրտչյանին, Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Կարինե Գլոյանին, «Մաշտոց» հանդեսի գիտական խմբագիր, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային քաղաքականության վարչության պետական ծրագրերի վարչության պետ Գառնիկ Գուլյունջյանին, գեղանկարիչներ, «Մաշտոց» հանդեսի գեղարվեստական խմբագիրներ Խաչիկ Ղարաբեկյանին և Կարեն Դավթյանին:

Ակամայից հպարտանում են նրանցով, քանզի նրանց քրիստոնեական և ազգային անշահախնդիր նվիրումը գնահատվում է ըստ արժանվույն, ու նրանց ջանքերի արդյունքը դառնում է ոգեղեն արժեքներ, մնայուն ներդրում մեր քաղաքի շարունակվող պատմության մեջ:

Ավելացնենք, որ առաջիկայում «Մաշտոց» հանդեսը կընդգրկվի բարձրագույն որակավորման հաստատության (ԲՈՂ) գիտական աշխատանքների ցանկում, հետևաբար նրանում տպագրված մշակութային, արվեստի տարբեր ճյուղերին, մանկավարժությանը վերաբերող հոդվածները գիտական ուժ կստանան:

**Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ Թեկնածուները կսկսեն առաջադրվել նոյեմբերի 21-ից

Հայաստանի նախագահի ընտրությունները տեղի կունենան **2008-ի փետրվարի 19-ին**: «Ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, հանրապետության նախագահի ընտրությունների օրը հայտարարվում է ոչ աշխատանքային օր»: Ընտրված նախագահը իր պաշտոնը կըստանան իր արժեքի 9-ին:

Նախագահի թեկնածու կարող է առաջա-



դրվել 35 տարին լրացած, վերջին 10 տարում Հայաստանի քաղաքացի հանդիսացող և վերջին 10 տարում հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ: Համաձայն գործող օրենսգրքի, ՀՀ նախագահի թեկնածուն կարող է առաջադրվել կուսակցության կամ քաղաքացիների նախաձեռնող խմբի կողմից:

# ՆՎԱԳԱԽՄՔԻ ԵՎ ԴԻՐԻԺՈՐԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀՈՔԵԼՅԱՆԸ ԿԱՄ 40 + 60



Ընդունված կարծիք է. նվագախումբը կատարյալ է հնչում միայն այն ժամանակ, երբ իր դիրիժորի հետ մեկ ամբողջություն է կազմում: Իսկ երբ վերջինս հորեյանն էլ է նշում այսպես ասած «երկուսը մեկուն», դա արդեն գրեթե իդեալական տարբերակ է, ինչպիսին և դարձավ Հայաստանի հեռուստառադիոընկերության և ստրադայի-սիմֆոնիկ

նվագախմբի և նրա գեղարվեստական ղեկավար Երվանդ Երզրանյանի հորեյանական համերգը ֆիլիարմոնիայի «Արամ Խաչատրյան» մեծ դահլիճում: Նվագախումբը 40 տարեկան է, ղեկավարը՝ 60: Միասին պատկառելի տարիք է՝ մեկ դար:

Տեղեկանք. Հայաստանի հեռուստառադիոընկերության էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը, որ մեր երկրի լավագույն նվագախմբերից մեկն է համարվում, ստեղծվել է 1966-ին կոմպոզիտոր և խմբավար Մարտին Վարդազարյանի կողմից սկզբում որպես Բիգ Բենդ, ապա 1978-ին կոմպոզիտոր և խմբավար Մելիք Մավիսակալյանի կողմից ընդլայնվել և վերակազմավորվել է որպես սիմֆոնիկ նվագախումբ՝ ներշնչանքի աղբյուր ծառայելով շատ ու շատ հայ կոմպոզիտորների համար: 1986-ից նվագախումբը ղեկավարում է կոմպոզիտոր և խմբավար Երվանդ Երզրանյանը՝ ակտիվացնելով նվագախմբի միջազգային գործունեությունը. համերգային շրջայցեր Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Հարավսլավիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում և ԱՄՆ-ում...

**Տեղեկանք. Երվանդ Դավիթի Երզրանյանը ծնվել է 1947թ. հունիսի 19-ին երաժշտական ընտանիքում. մայրը՝ դաշնակահարուհի, վոկալիստ Ծովիկ Գուրգենի Զանիբեկյանը, աշխատում էր Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, հայրը՝ Դավիթ Ավետի Երզրանյանը, նույն թատրոնի գլխավոր դիրիժորն էր: Ավարտել է Ն. Ստեփանյանի անվան երաժշտական դպրոցը, ընտանիքում՝ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը, ընտանիքում՝ Պոլիտեխնիկական ինստիտուտ, կիրառական տեխնիկայի ֆակուլտետը: Զինվորական պարտքը հայրենիքի առջև կատարելուց հետո ընդունվել է կոմսերվատորիա և ավարտել էրգատր Գովհաննիսյանի կոմպոզիցիայի դասարանը: 1972-ից աշխատել է հեռուստառադիոպետկոմի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբում սկզբում որմի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբում սկզբում և, վերապես բաս կիթառահար, ապա՝ երկրորդ դիրիժոր է: Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: 1984-ից ջապեն, դրա գեղարվեստական ղեկավար: 1984-ից 1997թ.-ից ղեկավարում է Կոմիտասի անվան երաժշտա-նոցի էստրադայի և ջազային երաժշտության ամբիոնը: Նոցի էստրադայի և ջազային արվեստի գործիչների վաստակավոր գործիչ, ջազ փառատոների և մրցույթների դափնեկիր:**

Համերգի հաջորդ օրը Երվանդ Երզրանյանը, արդեն հորեյանական տրամադրությունը փոքր-ինչ թթափած, հարցազրույց տվեց մեր ամսագրին:  
- Բենջամին Ֆրանկլինն ասել է. «20 տարեկանում մարդուն իշխում է ցանկությունը, 30-ում՝ բանականությունը, 40-ում՝ ողջամտությունը»: Իսկ 60-ում:  
- Բոլորը միասին: Դե երևի սրանց կարելի է գումարել նաև իմաստությունը:  
- Օր օրի իմաստանում եք: Երեկ համերգից հետո նույն հարցին

պատասխանելիս իմաստության մասին բառ իսկ չասացիք:

- Երեկ շփոթված էի... Այո, ես իմաստուն մարդ եմ: Երկի գեներով է եկել: Ամեն ինչ 5-6 քայլ առաջ եմ տեսնում: Կինս ասում է. «Մեկ-մեկ բաներ ես ասում, որոնք առաջին հայացքից իմաստություն են թվում: Բայց որոշ ժամանակ անց համոզվում եմ, որ ճիշտ էիր»: Իմ իմաստությունը նրանում է, որ քաղաքականության մեջ չեմ խցկվում: Երկրորդ՝ ձգտում եմ աշխատել ու շփվել բարձրակարգ մասնագետների հետ: Երրորդ՝ ձգտում եմ հեռու մնալ անհաջողակներից: Եվ, չորրորդ, երբեք չեմ լսում խորհուրդները: Անգամ մտերիմներիս տվածները: Դեկավարի առաջին խնդիրը առողջ կոլեկտիվ ունենալն է: Հենց սկսում ես խորհուրդներին ականջ դնել, կոլեկտիվում խմբավորումներ են ստեղծվում, ինչն ի վերջո վատ ավարտ է ունենում: Կոլեկտիվը ղեկավարելու առաջին իսկ օրից հետո եմ այս կանոնին... Ոչ ոք ինձ չի կարող ասել, թե ինչու այս համերգին երգում է այս երգչուհին և ոչ թե այն մյուսը: Այդ հարցում լսում եմ, թերևս, միայն Մարտին Վարդազարյանի խորհուրդը: Այսօր նա միակ մարդն է, ով ինձ հետ հավասար, տեխնիկական հարցերը եթե չհաշվենք, աշխատում է նվագախմբում: Բոլորին հայտնի է, որ նա հիանալի մասնագետ է և շատ մեղմ մարդ: Եվ մեր տանդեմը լավ է աշխատում, որովհետև ես երբեմն ավերից դուրս եմ գալիս, ես «չարն» եմ աշխատանքում: Իսկ նա իմ «սամբերը քաշում է», կամ էլ նրան եմ փոխանցում «փայտիկը»: Կարծես պահապան հրեշտակ լինի, նրա դերը շատ մեծ է: Գիտեք, երիտասարդներով լի կոլեկտիվ է, ստիպված ես դաստիարակել: Եվ դա ստացվում է նաև շնորհիվ Վարդազարյանի:

Գործունեության ամենակզբում մի պահ կար, որ կարող էի թողնել կոլեկտիվը. իմ դեմ տարատեսակ դավեր էին նյութում, անգամ նամակ էին գրել... Այդ ամենի միջոց կարողացա անցավ անցնել իմաստության շնորհիվ: Երբ ինչ-որ բան չի ստացվում, պատճառն իմ մեջ եմ փնտրում: Դա էլ է իմաստության նշան: Բախտս նաև բերել է, որ իմաստուն ղեկավարներ են ունեցել...

Այժմ էլ ինձ համար ղեկավարելը հեշտ չէ: Ստիպված եմ կոլեկտիվը պահելու համար անընդհատ ինչ-որ բան անել: Ես նվագախմբում պրոդյուսեր եմ, տնօրեն, ադմինիստրատոր, վարորդ, ցրիչ, մի քիչ ռադիստ, ղեկավար, դիրիժոր, կիթառահար, երբ պետք է՝ թմբկահար և այլն:

- Իսկ ծա՞նր է Մոնոմախի գլխարկը:
- Կուզենայի ուրիշ մեկի գլխին դնել, բայց դեռ չկա նման գլուխ: Ձահել, գործունյա պրոդյուսեր եմ փնտրում:
- Ինչպե՞ս եք ներկա մրցակցության ու ոչ բավարար ֆինանսավորման պայմաններում երաժիշտներ հավաքագրում:
- Նվագախմբում մշտապես ստաժյորներ ունենք: Մրցակից նվագախմբեր կան, որոնք շատ ավելի լավ են զինված, ֆինանսական հիմքն էլ շատ լավ է: Բնականաբար, նրանք, հենց լավ երաժիշտ և աճում, կարող են նրան հրապուրել-իրենց կողմը քաշել: Խախտելով բարոյական նորմերը: Երբ նոր-նոր էի սկսել նվագախմբի ղեկավար աշխատել, Կոնստանդին Օրբելյանի հետ միանգամից պայմանավորվեցինք, ընդ որում, նախաձեռնությունը նրանն էր: Նա ինձ ասաց. «Վանդիկ, սիրելիս, արի այսպես անենք. եթե իմ կոլեկտիվից որևէ մեկը ուզենա քեզ մոտ աշխատել կամ քո մոտից՝ իմ մոտ, ապա դա պիտի լինի մեր գիտությանը»: Ահա մենք այդպես բաժանեցինք ոլորտը: Այժմ նման բաժանում, ցավոք, չկա: Ես միշտ պարտադրվում եմ այն բանին, որ իմ աճեցրած երաժշտին կարող են հրապուրել-տանել: Ճիշտ է, նման բան հազվադեպ է լինում, բայց լինում է: Ես միշտ կարևոր երաժիշտների համար փոխարինողներ ունեմ:
- Բայց չէ՞ որ Ռախա Սկրտչյանն էլ էր, օրինակ, այդ ժամանակ ելույթ ունենում Օրբելյանի նվագախմբի հետ:

- Ռախսան մեր նվագախմբում աշխատում է դրա ստեղծման առաջին օրից, թեև նրան Կոնստանդին Օրբելյանն էլ է քանիցս հրավիրել հանդես գալ իրենց հետ, և դա նորմալ երևույթ է: Ռախսա Սկրտչյանը մինչ օրս մեր կոլեկտիվի ամենանվիրված անդամներից է: Ուզում են նշել նաև տրոմբոնահար Խոսրով Վարդանյանին, նվագախմբի կոմպոզիտորներ Ջուլիանյանի, Ջուլիանյանի, Ջուլիանյանի, ֆլեյտահար Կոստանդին Մանուկյանին, մեր սոլիստին, այս ժամանակում այսօր լավագույններից մեկին՝ ջութակահար Հակոբ Շիրինյանին, ջութակահար, երկրորդ ջութակների կոմպոզիտորներ Ար-

մեն եմյանին, փողիար, արդեն 10 տարի մեր նվագախմբում աշխատող Սամվել Սկրտչյանին, ով ժամանակին Օրբելյանի նվագախմբում առաջին շեփորն էր: Այս մարդիկ են պահպանում նվագախմբի ավանդույթները:

- Երիտասարդ սերունդն էլ կարծես թե ոչնչով չի զրոյանում: Երեկ ձեր մենակատար աղջիկների ելույթը լսելուց հետո հանդիսատեսներից մեկն ասաց. «Երևում է, որ սոլֆեջիո» սովորած աղջիկներ են»: Այսպիսի վրկալիստներ դաստիարակելով, այնուամենայնիվ, չեք հրաժարվում տարատեսակ շուռ նախագծերի մասնակցությունից: Ձեզ դո՞ր է գալիս այսօրվա մեր էստրադան:

- Մասնակցում են ըստ անհրաժեշտության: Երեկ համերգի ժամանակ Մարտին Վարդապարյանն ու ես փորձում էինք կատակ երգ երգել, իսկ մեր աղջիկները օգնում էին մեզ: Այդ երգը սովորել էինք համերգից 20 րոպե առաջ: Լուսինե Կոնյանը կոնսերվատորիայի ասպիրանտ է, իսկ Էլյա Թասչյանը և Իլոնան ուսանում են կոնսերվատորիայի ջազային բաժնում, շատ տաղանդավոր երգչուհիներ են: Ինչպես չնշենք Ինգո և Անուշ Արշակյաններին: Բարձրակարգ երգչուհիներ են, լուրջ, խորը երաժիշտներ: Ինգոյան, օրինակ, մեկ-երկու օրում յուրացրեց կարծես թե իրեն ոչ հատուկ ժանրի երգը: Եթե առաջ դուռտով էին երգում և հիմնականում հայկական ժողովրդական, ֆոլկլորային երգեր, այս անգամ ելույթ ունեցան նոր ամպլուայով: Որպես երաժշտի բարձր են գնահատում և Հայկոյին: Ինչ վերաբերում է ոչ պրոֆեսիոնալիզմին, ապա, իհարկե, այսօր էստրադայում շատ է դա: Ժամանակին ինքնագործունեության ու պրոֆեսիոնալ բեմի սահմանազատում գոյություն ունեն: Ինքնագործ բեմից պրոֆեսիոնալ բեմ տեղափոխվելու համար անհրաժեշտ էր երկար ժամապարհ անցնել: Ռաիսա Սկրտչյանը ևս սկսել է ինքնագործունեությունից: Ներկայիս երիտասարդ կատարողների մեծ մասին կարելի է լավ կամ միջակ ինքնագործունեության ներկայացուցիչներ համարել: Պրոֆեսիոնալները շատ չեն: Նրանցից շատերը լավ գումարներ են աշխատում: Այսօր մեծ է երգիչների բազմազանությունը:

Բայց, երևի, առանձնապես վատ բան չկա դրանում: Քանակն, այնուամենայնիվ, որակ է տալիս:

- Եթե տաղանդը պատվերով լինե, ի՞նչ կընտրեիր: - Երաժշտականը: Եթե հիմա ուրիշ բան ասեն, կեղծ է հնչելու: Կու-

զենայի ավելի տաղանդավոր լինել, քան եմ:

- Փորձենք վերացարկվել երաժշտությունից...

- Կուզենայի լավ ֆուտբոլիստ լինել: Կուզենայի լավ նկարել: Շատ են նախասնծում նկարիչներին: Նրանք չեն հասկանում ինչպես ենք մենք կարողանում միաժամանակ այդքան հնչյուն լսել: Իսկ ես չեմ կարող հասկանալ... Բայց արժե՞ այդ մասին խոսել: Անեն մեկին իրենն է տրված:

- Լայն հասարակության ներ շրջանակներում ձեզ Վանդիկ են ասում: Կարծես թե մեծ տղամարդ եք, 60 տարեկան, բայց դեռ Վանդիկ եք մնացել: Դա ձեզ չի՞ շփոթեցնում:

- Նախ և առաջ, ես ինձ 60 տարեկան չեմ զգում: Երկրորդ՝ դա այնքան էլ հաճախ չի պատահում: Այդպես ինձ անվանում են միայն հին ընկերներս: Պոլիտեխնիկականում սովորելիս մենք ստեղծեցինք «Երազողներ» համույթը: Հինգ հոգի էինք՝ Հրայր Կոտոյանը, վոկալիստ Ջավեն Սարգսյանը, սոլո կիթառահար Հակոբ Պետրոսյանը, ես և թմբկահար Արմեն Ջաքարյանը: Նրանցից ավելի մտերիմ ընկերներ չունեն: Հոգով մենք միանգամայն ջախել ենք: Հաճելի է, երբ ինձ այդպես են անվանում:

- Ջախելությանը հատուկ է խենթությունը: Նման բաներ անո՞ւմ եք:

- Սիմոն բաներ՝ ոչ: Բայց կինս ասում էր, որ իմ ամբողջ կյանքը խենթություն է: Հեշտ բաներ, ստանդարտ իրավիճակներ ու ոչ ինքնատիպ լուծումներ չեն սիրում: Պիտի անպայման դժվարություններ ստեղծեն ու հետո սկսեն դրանք հաղթահարել:

- Բացի նրանից, որ երկու հոբելյանը 100-յակի վերածելու որոշումը, ինչպես կատակեց Մարտին Վարդապարյանը, կատարվել էր Սիմոնի մտածածը: Գազարի կազմակերպության թախանձալի խնդրանքով, կարելի է Եմբաղել, որ դրանում լավ մշան եք տեսել:

- Հոբելյանները մեկտեղեցինք ուղղակի այն պատճառով, որ «երկուսը մեկում» և էժան է, և կոմպակտ... Մինչև 100 տարեկան ապրել չեն ուզում, եթե դա նկատի ունենք: 80-ից հետո պետք չեն լինելու: Մինչև 85-ն էլ ոչ ոք չի թողնի աշխատել: Բայց ինչ-որ բան կկարողանան անել: Չնայած, իհարկե, յուրաքանչյուր դիրիժոր առանց նվագախմբի մարդ չէ... Նվագախումբն էլ առանց դիրիժորի նվագախումբ չէ: Ես անպայման ուզում եմ փոխարինող գտնել, բայց դեռ չեմ կարողանում...

**Հարցազրույցը՝ Յանա ԱԿՉԻՅԱՆԻ**

# ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ՀԻՆԸ

Մեզանում եկեղեցաշինությունը նոր թափ է հավաքում. մարդիկ այսկերպ փորձում են ամմահացնել իրենց ամունները: Այնինչ եկեղեցիներով, վանքերով ու մատուռներով հարուստ Հայաստանը վաղուց է համարվում թանգարան բաց երկնքի տակ, և ժամանակների փորձությունը կրած շատ կիսավեր եկեղեցիներ, վանքեր ու ժամեր սպասում են վերականգնող վարպետին: Եղածը վերականգնելու, պահպանելու գիտակցությամբ են առաջնորդվել Ապարանի Հարթավան (Ղարաթիլիսա) գյուղի բնակիչները, որոնք ջանքերով ու միջոցներով վերականգնվել է գյուղի 19-րդ դարի եկեղեցին: Խորհրդային իշխանության տարիներին, կիսելով շատ եկեղեցիների ճակատագիրը, 1869-ին կառուցած այս եկեղեցին ևս վերածվել էր պահեստի: Այժմ այն նորոգ է ու կանգուն, տեղադրվել են զմբեթն ու զանգ, փոխվել են կաղնու փայտից կրող սյուները, վերականգնվել է բեմը: Գիշտ է, ամեն շաբաթ չէ, որ այստեղ ժամերգություն է տեղի ունենում, բայց հարկ եղած պահին գործուղված հոգևորականը կատարում է հայ եկեղեցու բոլոր արարողությունները պսակ, կնունք:



դրել են Տարոնից, Խոյից, Բայազետից գաղթածները 1828-1830 թթ., գտնվում է Ապարան-Երևան մայրուղու վրա՝ շրջվենտրոնից 14 կմ հարավ: Այս նույնն են պատմում նաև հարթավանցիները, սակայն մանրամասներ են հաղորդում նաև եկեղեցու մասին: Գյուղի հիմնադիրներից մեկի՝ Հակոբի ժառանգներից Անանիա Խաչատրյանն ասում է, որ այն Սուշի Թուլս Մանուկ եկեղեցու կրկնօրինակն է, որ կառուցել են ներգաղթածները՝ երգրի կարոտն առնելու հրամայականով: Ցավոք, չի պահպանվել կառուցողի անունը:

Գյուղի հին գերեզմանոցում պահպանվել է Բոզոյ Մնացականի տապանաքարը (1829-1899 թթ.): Բոլոր հարթավանցիները գիտեն, որ Սուշից տեղափոխվելիս Մնացականը բարուրի երեխա է եղել: Իսկ գյուղը հիմնել է Մելիք Պողոսն՝ իր չորս եղ-

բայրների՝ Պետրոսի, Ջաքարի, Կարապետի ու Հակոբի հետ: Մինչդեռ գյուղի 12-րդ դարի գերեզմանոցը ու 13-րդ դարի կիսավեր մատուռը վկայում են, որ տարածքը բնակեցված է եղել ավելի վաղ: Մատուռը վերջնականապես ավերվել է 1988-ի երկրաշարժից. փլվել է կամարի աջ թևը: Այն կառուցվել է 1212-1224 թթ. հայտնի իշխան Քուրդ Վաչուկյանի ու տիկնոջ՝ Խորիշայի պատվերով ու միջոցներով (վերջիններիս պատվերով ու հովանավորությամբ են կառուցվել Սաղմոսավանքի ու Աստվածընկալ եկեղեցիական համալիրները): Ի դեպ, հին գերեզմանոցի ցանկապատին և մատուռի վրա պահպանվել են խորհրդային ժամանակներում փակցված ցուցանակները՝ «Պահպանվում է պետության կողմից», ինչը վկայում է իրենց հնությունների հանդեպ հարթավանցիների վերաբերմունքի մասին: Հարթավանց այսօր ունի շուրջ 1030 բնակիչ: Ինչպես Հայաստանի շատ բնակավայրերից ու գյուղերից, Հարթավանցից ևս շատերը արտագնա աշխատանքի են մեկնել Ռուսաստան: Ուզում ենք հավատալ, որ հայրենի գյուղի նորոգված եկեղեցու զանգերի կանչով նրանք անպայման կվերադառնան:

**Անուշ ԱՆԱՆՅԱՆ**

Հարթավանց գյուղի մասին «Հայկական սովետական հանրագիտարանը» կըցկտոր տեղեկություններ է տալիս. հիմնա-

## **Жерар ДЕПАРДЬЕ: Я хочу, чтобы через много лет обо мне вспоминали как о человеке, который любил жизнь во всех ее проявлениях: семья, женщины и, конечно, вино...**



**27 октября 2007 года, по приглашению президента Фонда поддержки международных экономических и гуманитарных программ Мецо Игитяна, Москву с деловым визитом посетил прославленный актер и винодел Жерар Депардье. Знаменитый француз представил в Москве свои анжуйские вина, которые уже в ноябре появятся на российском рынке.**

**Жерар рассказал о главной цели своего нынешнего визита в Россию – начале поставок на российский рынок вин из его замка «Шато де Тинье».**

**Отвечать на вопросы журналистов Жерару Депардье помогал сидящий рядом Президент Фонда поддержки международных экономических и гуманитарных программ Мецо Игитян.**

Ланы Анурии, газета «Новые известия».

- Господин Депардье, скоро Вам исполнится шестьдесят лет, согласны ли вы со своим возрастом?

Ж. Депардье.

- Я готов принять этот возраст (с улыбкой сказал актер) ...шестьдесят лет для мужчины - это еще молодость, так что я пока, пожалуй, останусь «плохим парнем», а затем признался, что съедает за обедом ягненка, запивая его, как минимум, двумя бутылками вина.

Казенов Алексей, канал «Домашний».

- Не боитесь ли Вы, господин Депардье,

подделки своих вин в России?

- Вряд ли, в любом случае, это дорогое вино, и подделать его очень сложно. Но если найдется тот, кто сможет это сделать, я лично его отправлю! (Сразу после этого он рассмеялся, а вслед за ним и журналисты.)

- Двойник – это уже подделка. Были ли случаи, когда подделывали Вас?

- Нет, таких случаев я не помню. Все кто меня знают - не спутают. Были случаи в прессе - обо мне рассказывали небылицы. C'est la vie - это законы жизни и я не обра-

щаю внимание на подобные факты.

Представитель журнала «Гастроном».

- Вы автор гастрономической книги. Скажите, пожалуйста, какие Ваши рецепты лучше всего сочетаются с винами из Вашего замка?

- Есть много хороших рецептов, все зависит от вина, которое Вы любите употреблять. Если Вы легли очень поздно и проснулись очень рано, советую приготовить бутерброд из заячьего паштета и небольшого кусочка хлеба, сочетая это с бокалом белого вина. В полдень - большой стэйк с 1-2 бутылка-

ми вина (пошутил Жерар) ...и хорошая компания – вот что самое важное!

- Принято считать, что виноградарство – наследственная профессия, знания передаются от отца к сыну, далее и далее. Были ли у вас предки – виноделы. А, если нет, как Вы собираетесь сформировать эту традицию?

- Во Франции в начале века все занимались виноградарством так же, как в России все выращивали картошку (подчеркнул актер), каждой стране присущи свои традиции. Я начал заниматься виноделием с двадцати лет. Вино – это живой продукт, подобно земле, на которой он выращен. И мы постоянно совершенствуем технологию его производства. Замок «Шато де Тинье» находится в восьмидесяти километрах от моря, эта земля засажена виноградниками, начиная с VI века. Я стараюсь продолжить эти традиции и прикладываю к этому максимум усилий. Надеюсь, что вкус моего вина запомнится Вам надолго.

Светлана, телекомпания «Росбизнесконсалтинг».

- Какую память о себе Вы хотели бы оставить спустя, скажем, 50 лет. Как актера или винодела?..

- Я хочу, чтобы через много лет обо мне вспоминали как о человеке, который любил жизнь во всех ее проявлениях: семья, женщины и, конечно, вино...

- Говорят, чтобы понять вкус вина – достаточно сделать глоток и прислушаться к ощущению, а сколько времени нужно мужчине, чтобы понять женщину?

- Женщина, к счастью, гораздо загадочнее, чем вино... В женщине все гораздо сильнее и глубже... Но многое мы можем

разделить с ней за бутылочкой хорошего вина. Мне известно, что вкусы мужчин и женщин по отношению к еде и вину во многом не совпадают. Когда женщины пробуют мое вино, стараюсь прислушиваться к их мнению – это для меня очень важно.

- Месье Депардьё, Вы очень удачно дополняете друг друга с Пьером Ришаром на экране. Он, по-моему, тоже сейчас занят производством вина. Не будет ли у Вас с ним конкуренции?

- Не думаю. У него очень хорошее вино, именно я ему посоветовал купить эти виноградники. Я рад за него, потому что он получил возможность познакомиться с землей, с людьми, которые на ней работают – открыть для себя эту жизнь, занимаясь виноделием.

Владимир Цапелик (винный эксперт).

- Я читал, что у Вас появились виноградники в Бордо – два гектара. Это может означать, что наряду с теми сортами, которые мы сегодня пробуем, появятся бордовские сорта?

- Есть много территорий, которые мне интересны. У меня есть компаньоны в Испании, Аргентине, Италии, в различных регионах Анжу... Я занимаюсь этим, чтобы открыть для себя новые территории, культуры и технологии производства вина. Бордо знают все, виноградники в Бордо и Анжу, на самом деле, одинаковы. Анжуйские вина очень хороши, и мне приятно, что Мецо проводит такое начинание в России именно с ними. Анжуйские вина отличаются своей мягкостью и нежностью. В Анжу мы специализируемся на винах «Rosé». Эти вина любят россияне, особенно женщины. Но я вам советую попробовать и анжуйское красное вино.

Эдуард Петросян, журнал «Горцарар».

- Месье Депардьё, Ваш друг Мецо Игитян наверняка угощал Вас армянскими винами. Есть ли сходство между армянским вином и вином из замка «Тинье»?

- Вино есть вино. Больше всего в процессе виноделия меня привлекают путешествия и встречи с людьми. Я чувствителен к различным культурам. Армянское вино для меня это, прежде всего, армянский дух!

- Вас необыкновенно любят в России, как нигде в мире! Как вы к этой любви относитесь?

- Я чрезвычайно тронут той любовью, с которой меня всегда встречают в России. Я сам по характеру очень похож на русского, мне близка ваша неумность, у вас все «слишком», вы как ветер, которым невозможно управлять.

Журнал «Luxury».

- Как Вы относитесь к биодинамическому виноделию, которое сейчас начинает распространяться?

- Почему вообще возник этот метод? Потому что мы чувствуем – существует экологическая опасность для нашей планеты, для ее ресурсов. Поэтому люди начали искать другие способы производства. Но, тем не менее, я сторонник традиционных методов производства вина. Просто нужно бережнее относиться к винограду и к земле, на которой он произрастает, нужно разрабатывать и применять новые технологии. На самом деле на планете много стран, которые занимаются виноградарством. Земель для выращивания винограда хватает для того, чтобы удовлетворить все запросы ценителей вин.

Жерар Депардьё, сыгравший некогда роль гениального кондитера в фильме «Ватель», поражающего своим искусством самых искушенных гурманов, на этот раз сам наслаждался кулинарными шедеврами, успевая при этом раздавать автографы и фотографироваться со всеми желающими. Из Еревана было доставлено два оригинальных торта. На первом – изображение старинного замка, а второй выглядел как изящный сундучок, внутри которого располагалась шоколадная бутылка вина «Шато де Тинье». Бутылка с этикеткой выглядела весьма правдоподобно, актер даже отломил кусочек шоколадного шедевра, чтобы удостовериться в его кондитерском происхождении.

Вина из замка, жизнь которым дали благородные анжуйские лозы, произвели на гостей самые яркие впечатления. Широкая палитра ароматов и мягкое, длительное послевкусие оценили по достоинству. Публика с удовольствием наслаждалась легкостью и прозрачностью белых вин Кото дю Лэон (Coteaux du Layon) и Шардоне-Л'Энсуми, разгадывала неожиданные загадки анжуйских красных вин «Вьей Винь», «Ле Ланд», «Сирано», «Вэн де Пэи Жардэн де ля Франс»... Ягоды, пион, пряности, неуловимое дыхание морского бриза глубины вековых тайн, хранимых землями замка Жерара Депардьё – это лишь некоторые ноты благородных вин «Шато де Тинье»...

Мнение винного эксперта, президента «Независимого винного клуба» Владимира Цапелика: «Российские потребители давно знакомы с розовыми анжуйскими винами, и они пользуются устойчивым спросом, особенно летом. Однако Жерар Депардьё решил удивить нас и представил красные вина «Chateau de Tigne» из ви-

нограда Каберне Фран, порадовавшие легкостью, фруктовостью и свежестью. Все эти качества делают их незаменимыми партнерами для самых разных блюд – от мясных под соусами, до рыбных, как это ни удивительно...».

В тот же день, в Национальном комитете общественных наград России, Жерару Депардьё был вручен орден «Петра Великого 1 степени с лентой». Этой награды он удостоился за большой вклад в мировой кинематограф.

В церемонии награждения участвовали председатель президиума Комитета общественных наград России Виктор Шевченко, президент Фонда поддержки международных и гуманитарных программ Мецо Игитян, посол Франции в России Станислас де Лабуле и другие официальные лица. Он тепло поблагодарил за оказанную ему честь и признался, что ему «очень лестно получить столь почетную награду на русской земле».

Во время церемонии награждения Жерара Депардьё поздравили кадеты, вручив прославленному актеру и виноделу необычный подарок – кадетские погоня.

Двумя часами позже, в самом крупном элитном винном бутике Европы «Коллекция вин» на Кутузовском проспекте, состоялось открытие винной стойки Депардьё. Мероприятие проходило в торжественной обстановке. У российских гурманов в тот день также появилась замечательная возможность познакомиться с винами из замка «Шато де Тинье».

Утром 28 октября, Жерар Депардьё дал интервью «Первому каналу» и уже в полдень на частном самолете вернулся в Париж.

**Материал подготовил Эдуард ПЕТРОСЯН.**

## Исторические анекдоты

### Бесстрашный король короля

Знаменитый шведский король Карл XII - тот, кого воевавший с ним Петр I считал своим учителем в военном деле, был заядлым шахматистом, не расстающимся с шахматной доской даже в дальних и трудных военных походах. Ввиду своего монаршего ранга он особенно любил эндшпили, в которых, как правило, сам шахматный король активными действиями играет решающую роль в достижении победы. Желание поскорее обменяться фигурами и перейти в эндшпиль часто подвигало Карла выступить своим королем в гущу сражения уже в миттельшпиле или даже в самом дебюте, что повергало в смятение его партнеров-царедворцев. Последние предпринимали все усилия, чтобы по рассеянности случайно не поставить мат бесстрашному королю Его Королевского Величества. Поэтому фигуры противника бросались врасыпную от отчаянно наступающего короля монарха...

В наше время многие политические деятели являются ценителями и любителями шахмат. Потому что, во-первых, это показывает их высокий интеллектуальный уровень, следовательно, повышает имидж. И, во-вторых, шахматы учат, что победы часто достаются жертвой своих значимых фигур, вплоть до ферзя, вместо которых порой можно форсированно провести свою облюбованную пешку до восьмой горизонтали. А ведь умение в решающую минуту пожертвовать для победы любой фигурой или неожиданным маневром вывести на восьмую горизонталь незаметную до того пешку и

превратить ее в выгодную для ситуации фигуру есть вершина мастерства политического деятеля.

### Роковое название

В советские времена имя Спартака - предводителя восставших в I веке до н. э. гладиаторов - стало восприниматься как символ отваги, мужества и борьбы за свободу. В честь этого персонажа римской истории в СССР называли многих мальчиков. Особенно много Спартаков было в Армении. Здесь, наряду с Маратами, Спартаки стояли во главе целой армии революционных имен - Робеспьеров, Кромвелей, Дантонов, Жоресов, Либкнехтов и др. Однако, в отличие от остальных, именем Спартак называли не только младенцев, но и целые... спортивные общества. Причем спортобществ «Спартак» было такое множество, что соревнования между ними стали называть спартакиадами - по аналогии с олимпиадами. Скоро это название перешло к межреспубликанским соревнованиям. Например - «Спартакиада народов СССР». Название довольно нелепое и анекдотичное с исторической точки зрения. Разве народы СССР состязались в гладиаторском искусстве? Может, оттого и произошли впоследствии вооруженные стычки и кровавые столкновения в Карабахе, Средней Азии, Южной Осетии, Приднестровье? Прав был киногогерой Г. Данелии Мимино, когда по-хорошему советовал: «Прежде чем говорить что-нибудь, подумай!».

Роберт ОГАНЯН.

## Будут ли дети любить свой город, если они его не знают?

Знать свой город обязан каждый. А уж такие элементарные вещи, как, сколько ему лет или названия улиц, должны быть известны со школьной скамьи. Я беседовал с некоторыми учениками разных школ Еревана и провел тест на тему «Знаешь ли ты Ереван?».

«Жертвами» опроса стали 12-16-летние ученики. Конечно, много требовать от них рановато, но, с другой стороны, в родном городе живут, на экскурсии ходят, значит, азы усвоены. Тест состоял из 12-ти вопросов. Признаюсь сразу, очень легких. Например, «Всегда ли Ереван был столицей Армении?», «Какие города были ее столицами?», «Кто автор памятника Давиду Сасунскому?», «Как звали лошадь Давида Сасунского?», «Чей памятник стоит напротив кинотеатра «Айратат?» и другие. Но даже такие элементарные вопросы ввели



многих школьников в ступор. На вопрос «Когда в столице открылось метро?», дети ответили, что это произошло 10 лет назад.

Были у меня в запасе и каверзные вопросы. «Кому поставлены памятники у Матенадарана?».

Видимо, памятники в Ереване не впечатляют подрастающее поколение.

Но самым непосильным стал вопрос «Какой музей расположен на площади Республики?».

Если беседа происходила в школе, то каждый преподаватель разводил руками, убеждая меня, что класс совсем недавно был там на экскурсии.

Знание своей малой родины - это одна из форм воспитания патриотизма. Получается, что столичные власти вкладывают в это большие деньги и... «все мимо кассы».

Лев ОГАНЕЗОВ.

## «Горцарар»

Издается с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-  
ВАГРАМ БЕКЧЯН**

Зам. гл. редактора -  
**Роза ГУЛЯН**

Գլխ. խմբագրի տեղակալ՝  
**Ռոզա ՂՈՒԼՅԱՆ**

**ИЗДАТЕЛЬ**

Издательский Дом

**«ШАГАНЭ»**

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован  
в Министерстве Российской Федерации  
по делам печати, телерадиовещания  
и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер**

**ПИ № 77-5015**

Авторские материалы  
не рецензируются и не возвращаются.  
Переписку с читателями редакция  
не ведет. Мнение авторов может  
не совпадать с мнением редакции.

**Материалы со знаком ♣ публикуются  
на правах рекламы.**

**Редакция не несет ответственности  
за содержание рекламных объявлений.**

**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО**

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»  
Формат А3, объём 4,0 п.л.  
Тираж 1 500 экз. Зак. № 2964.

**Территория распространения:**  
Российская Федерация, страны СНГ,  
зарубежные страны.

**В номере использованы материалы  
«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР»,  
«ԿԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎԱՆԿ»,  
«ՉԻ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».**

**Цена свободная.**

**Адрес редакции:**

248001, г. Калуга,  
ул. Суворова, 160.

Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.

E-Mail: gortsarar@mail.ru

факс (4842) 565-929,

**www.gortsarar.ru**



E-Mail: bshahanev@kaluga.ru